ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՍՏՎԱԾ ԻՆՁ ՍԻՐՈՎ Է ՍՏԵՂԾԵԼ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎՍՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

6 ՏԱՐԵԿԱՆ

Ի ՄԱՄ

1-18 դասեր

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ -2007

ՀՏԴ
ԳՄԴ
Մ

Մ

Աստված ինձ սիրով է ստեղծել: Դպրոցական վաղ տարիքի
երեխաների քրիստոնեական ուսուցման ձեռնարկ (6 տարեկան),
I մաս:
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին-2007թ.: 128 էջ:

ԳՄԴ

ISBN

© World Vision, 2007

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝

ՏԵՐ ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՏԵՐ ՂԵՎՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ **WORLD VISION**
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

ԵՎ **WORDIRECT** ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՆԿԱՐԻՉ՝ **ԼԵՎՈՆ ՋԱՔՅԱՆ**

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ՝ **ՅՈՒԼՅԱՆԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ԳԼՈՒԽ Ա ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾԵՑ ԱՅՍ ԳԵՂԵՑԻԿ ԱՇԽԱՐՀԸ _____ 7

1. Աստված ստեղծում է աշխարհը _____ 9

2. Արևը, լուսինը և աստղերը լույսի համար են ստեղծված _____15

3. Աստված ստեղծեց ջուրը կյանքի համար _____21

4. Մենք գովում ենք Աստծուն Իր արարչագործության համար _____27

ԳԼՈՒԽ Բ ԱՍՏՎԱԾ ԻՆՉ ՍԻՐՈՎ է ՍՏԵՂԾԵԼ _____33

5. Ես հրաշալի եմ ստեղծվել _____ 35

6. Աստված ճանաչում է ինձ իմ անունով _____ 41

7. Ես կարող եմ լսել _____ 47

8. Աստված օգնում է ինձ մեծանալ _____ 53

ԳԼՈՒԽ Գ ՎԱՅԵԼԵՆՔ ԱՅՍ ՀՐԱՇԱԼԻ ԱՇԽԱՐՀԸ _____59

9. Նոյը փրկվում է ջրհեղեղից _____ 61

10. Հովնանը կետի փորում _____ 67

11.Հիսուսը խաղաղեցնում է փոթորիկը _____ 73

12.Հիսուսը կերակրում է իր ընկերներին _____ 79

ԳԼՈՒԽ Դ ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾԵՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ _____ 85

13. Առաջին ընտանիքը _____ 87

14. Երեխաները ծնողների ուրախությունն են _____ 93

15. Զաքարիան և Եղիսաբեթը տոնում են _____ 99

16. Հովսեփը դառնում է Հիսուսի երկրավոր հայրը _____ 105

ԳԼՈՒԽ Ե ԱՍՏԾՈ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՈՆՈՒՄ Է _____ 111

17. Խաչվերաց տոնը _____ 113

18. Սուրբ Ծնունդը _____ 119

ԱՂՈԹՔՆԵՐ ՎԵՑ ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ _____ 125

ԳԼՈՒԽ Ա

Աստված ստեղծեց այս գեղեցիկ աշխարհը

Աստված ստեղծեց այս գեղեցիկ աշխարհը մեզ համար, որ ուրախ ապրենք: Երկիրը, օվկիանոսներն ու գետերը, արևը, լուսինը և աստղերը, մեծ ու փոքր կենդանիները և ուտելու հրաշալի բարիքները բոլորն էլ Աստծո նվերն են մեզ:

ԳԼՈՒԽ Ա

Աստված ստեղծեց այս գեղեցիկ աշխարհը

Ծնողների համար

Երեխաները սիրում են բացահայտել իրենց շրջապատող աշխարհը և վայելել Աստծո արարչագործության հրաշքները: Այս գլուխը բավարարում է երեխաների բնական հետաքրքրությունները և արարչագործության պատմության միջոցով ինքնաբուխ պատկառանք ներշնչում նրանց:

Սաղմոսներից և ավետարաններից քաղված համապատասխան հատվածների միջոցով երեխաներն ուսումնասիրում և սովորում են, որ արևը, լուսինը, աստղերը, ջուրը և ամեն ինչ այս աշխարհում ստեղծված են Աստծո կողմից մեր ուրախության համար:

ԴԱՍ 1

ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԸ

«ԵՎ ԱՍՏՎԱԾ ՏԵՍԱՎ, ՈՐ ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՍՏԵՂԾԵՑ, ԲԱՐԻ Է»:
Ըստ Ծննդոց 1:31

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Նայի՛ր այս էջի նկարներին: Դրանց մի մասին տեսել ես բնության մեջ, քանի որ նրանք ստեղծված են: Որոշներին էլ մարդիկ են հորինել: Անվանի՛ր ստեղծված այն առարկաները, որոնք չեն կարող պատրաստվել մարդկանց կողմից: Շրջագծի՛ր յուրաքանչյուրին: Ապա անվանի՛ր մարդկանց կողմից հորինվածները և քառակուսի՛ գծի՛ր դրանց շուրջը:

Քո շրջագծած նկարներից ո՞րն է ամենաշատը քեզ դուր գալիս: Դրա կողքը մի նշո՛ւմ կատարիր: Այժմ պատկերի՛ր և գունազարդի՛ր քո ընտրած նկարը մի էջի վրա, որն ուսուցիչը կտա քեզ:

Գիտե՞ս արդյոք, թե բնության մեջ ով է ստեղծել այս ամենը:

Լսի՛ր ուսուցչի պատմվածքը՝ գտնելու համար հարցի պատասխանը:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Աստված ստեղծում է աշխարհը

Ըստ Ծննդոց 1, 2:4-9

Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը և ասաց. «Թող լո՛ւյս լինի»: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ. առաջին օրը:



Աստված ստեղծեց տարածությունը և այն կոչեց երկինք: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ. երկրորդ օրը:

Աստված ստեղծեց ցամաքը, ծովերը և բոլոր տեսակի բույսերն ու ծառերը: Աստված տեսավ, որ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ. երրորդ օրը:

Աստված ստեղծեց արեգակը, լուսինը և բոլոր աստղերը՝ երկիրը լուսավորելու համար: Աստված տեսավ, որ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ. չորրորդ օրը:





Աստված ստեղծեց ծովի բոլոր կենդանիներին և երկնքի բոլոր թռչուններին: Աստված տեսավ, որ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ. հինգերորդ օրը:

Աստված ստեղծեց մեծ ու փոքր բոլոր տեսակի կենդանիներին: Այնուհետև Աստված ստեղծեց մարդուն իր նմանությամբ: Եվ Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել է, լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ. վեցերորդ օրը:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Շնորհակալություն Տեր՝ Քո բոլոր նվերների համար

Աստված տեսավ, որ այն ամենը, ինչ ստեղծել է, լավ է: Նա տվել է մեզ ամեն ինչ այս աշխարհում վայելելու համար: Ահա դրանք պատկերող որոշ նկարներ:

Գտի՛ր այն նախադասությունը, որը պատմում է, թե ինչպես ես սիրում Աստծո ստեղծածը: Այդ նախադասությունը գծով միացրու համապատասխան նկարին:

Ես սիրում եմ
խաղալ արևի տակ:

Ոչխարի բրդից
կարված հագուստը
տաք է պահում ինձ:

Ես սիրում եմ խորոված ուտել:

Ի՜նչ լավ է գիշերվա քունը:

Երգող թռչուններն
ուրախացնում են ինձ:

Հոգևոր երգերով փառաբանենք Աստծուն՝ մեր Արարչին

Այն մարդիկ, ովքեր սիրում են Աստծուն, երգեր են երգում Նրան փառաբանելու համար: Այդպիսի երգեր կարող ենք գտնել Աստվածաշնչում: Դրանք կոչվում են սաղմոսներ: Ահա փառաբանական մի սաղմոս, որով աղոթում ենք եկեղեցում:



Հոգևոր Բառարան

Սաղմոս

Խոսքեր, որոնք երգվում են Աստծուն փառաբանելու համար:

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՓԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԳԸ

Սուրբ Ներսես Շնորհալին սիրում էր փառաբանել Աստծուն իր հորինած երգերով ու շարականներով: Նա շատ նոր երգեր ու շարականներ գրեց եկեղեցական արարողությունների համար: Ահա մի տուն այն երգից, որ երգվում է ամեն չորեքշաբթի, Առավոտյան ժամերգության ընթացքում: Այն կոչվում է Արարչական երգեր:



Աստղի մեջ գրի՛ր քո ինքնուրույն փառաբանական բառերը:

Ամենուր տիրող խավարը ցրվեց
առաջին օրը Աստծո ստեղծած լույսից,
իսկ չորրորդ օրը Աստված այդ լույսից
ստեղծեց արևը, լուսինն ու աստղերը.
եկեք փառաբանենք Աստծուն,
Ով ստեղծեց ամեն ինչ:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այսօրվա դասը ձեր երեխային ներկայացրեց Արարչագործության պատմությունն ըստ Ծննդոց 1-2:4-9 համարների: Երեխաներն առանց դժվարության նշմարում են իրենց շրջապատող աշխարհը և ցնծություն ապրում հայտնաբերելիս այն ամենը, ինչ գոյություն ունի արար աշխարհում: Արարչագործության պատմության միջոցով մեզ առիթ է տրվում ճանաչելու մեր Արարչին: Արարչագործության պատմությունը մեզ համար բացահայտում է հիմնարար ճշմարտությունները, թե Ով է Աստված, որոնք են Նրա գործերը և ինչպես է Նա գործում: Մեր սովորած ճշմարտությունները հավիտենական են, ինչպես որ Աստված Ինքն է: Մենք սովորում ենք, որ մեր Տերը սիրող Աստված է, և Նա սիրուց է ստեղծել ամեն ինչ: Ինչ Աստված ստեղծել է, լավ է և հրաշալի: Նաև սովորում ենք, որ երբ Աստված կատարեց արարչագործությունը, նպատակ և ներդաշնակ կարգավորություն դրեց ամեն ստեղծածի մեջ:

Ձեր վեցամյա զավակի համար պատմության ամենակարևոր միտքն այն է, որ Աստված ստեղծեց ամեն ինչ և սիրեց իր ստեղծածը, քանի որ լավ էր: Ծնողները կոչված են ընդօրինակելու Աստծո սերը և հիանալու Նրա ստեղծագործությամբ, քանի որ նրանք վայելում են իրենց երեխաներին, որոնց ծնել են: Գտե՛ք տարբեր առիթներ ու եղանակներ՝ ճանաչել տալու ձեր մանուկին, թե որքան նա սիրված է, լավն ու հրաշալի: Սա կօգնի նրանց առողջ ինքնապատկերացում կազմելու, ինչն այնքան կարևոր է անձի աճման ու զարգացման այս փուլում: Դուք արդեն այդպես վարվում եք՝ նրանց խնամելով և կարիքները հոգալով: Ահա, թե ինչ կարող եք անել այսօրվա դասի միջոցով՝ ավելացնելու ներդրվող ջանքերը.

1. Ձեր երեխայի հետ վերանայե՛ք արարչագործության պատմությունը կա՛մ Աստվածաշնչի Ծննդոց գրքի 1-2:4-9 համարներից, կա՛մ էլ նայելով աշակերտական սույն դասագրքի համապատասխան էջը: Քաջալերե՛ք ձեր երեխային վերապատմելու պատմությունը՝ ձեր որոշակի օգնությամբ:
2. Զրուցե՛ք ձեր երեխայի հետ Աստծո ստեղծած բարիքների մասին, երբ ճաշ եք պատրաստում, երբ դրսում եք և նայում եք դեպի երկինք, դիտում երկիրը, լեռներն ու առվակները, գետերն ու լճերը, կամ երբ հիանում եք փոքրամարմին թռչունների գեղեցիկ երգով: Միաժամանակ, օգնե՛ք նրանց գնահատելու տարբեր տեսակի եղանակները՝ արևոտ օրը, անձրևը, ձյունը, շոգը կամ ցուրտը, և զրուցե՛ք նրանցից յուրաքանչյուրի անհրաժեշտության մասին:
3. Ընտանիքով սովորե՛ք հաճախակի աղոթել Սաղմոս 135:1, 4-9: Կարելի է նաև սաղմոսի հատվածը գրել թղթի վրա և տալ ձեր երեխային գունազարդելու: Այն տեղադրեք տանը՝ լավ տեսանելի մի անկյունում:

ԱՐԵՎԸ, ԼՈՒՍԻՆԸ ԵՎ ԱՍՏՂԵՐԸ ԼՈՒՅՍԻ ՀԱՄԱՐ ԵՆ ՍՏԵՂԾՎԱԾ

«ՕՐՀՆԵՑԵ՛Ք ՆՐԱՆ, ԱՐԵԳԱ՛Կ ԵՎ ԼՈՒՍԻ՛Ն, ՕՐՀՆԵՑԵ՛Ք ՆՐԱՆ, ԲՈԼՈ՛Ր ԱՍՏՂԵՐ ԵՎ ԼՈՒՅՍ»:

Սաղմոս 148:3

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

ԱՐԵՎՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

Մեր արևը ի՞նչ սիրուն,
Կարեց շապիկ մի նախշուն,
Տարավ, ասաց լուսնակին
Իր սիրելի քույրիկին.
- Ա՜յ իմ ընկեր սիրասուն,
Այսպես ամեն իրիկուն,
Պտտվում ես սարե-սար
Ու վանում ես չար խավար.
Այս շապիկը տամ նվեր,
Տա՛ր, վայելի՛ր այն, ընկե՛ր:

- Արև՛, ասաց լուսինը,
Ի՞նչ անեմ ես շապիկը.
Տես, որ արդեն փոքրանում,
Ու կես լուսին եմ դառնում,
Սիրուն, նախշուն նվերդ,
Ինչպե՞ս կտրեմ ես, ընկե՛ր.
Տար տո՛ւր նախշուն շապիկը,
Ոսկեմազիկ, սիրունիկ,
Այն մանուկին պստլիկ,
Որ չունի հայր ու մայրիկ:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Բեթղեհեմի Աստղը

Ըստ Մաթթ. 2:1-12, Ղուկ. 2:8-14



փայլում էին Բեթղեհեմի երկնքում, երբ հսկում էինք իրենց հոտը:

Մի հայտնվեց երկնքում և նրանց ասաց, որ նրանց Փրկիչն է ծնվել Բեթղեհեմում: Նրանք պետք է գտնեին մեջ դրված: Ապա շատ հրեշտակներ երգում էին. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում, խաղաղություն երկրի վրա բոլոր մարդկանց, ովքեր հաճելի են Աստծուն»:

Արևելքից , ովքեր ուսումնասիրում էին , տեսան մի նոր երկնքում: Նրանք գիտեին, որ դա մեծ ծնվելու նշանն է: Հետևելով աստղին՝ նրանք եկան Երուսաղեմ: «Որտե՞ղ է հրեաների նորածին , ում աստղը տեսանք արևելքում, և եկանք նրան երկրպագելու»,- հարցրեցին նրանք:

Հերովդես շատ նախանձեց այս մասին լսելով: Երբ նրա քահանաները հայտնեցին, թե Փրկիչը պետք է ծնվի Բեթղեհեմում, նա կանչեց իմաստուն և ասաց. «Գնացե՛ք և գտե՛ք մանկանը, և հետո եկե՛ք ինձ տեղեկացրե՛ք, որպեսզի ես նույնպես գնամ և երկրպագեմ նրան»:

Արևելքում երևացած լուսապայծառ առաջնորդեց նրանց այն վայրը, որտեղ մանուկը ծնվել էր: Նրանք ուրախությամբ ներս մտան և տեսան մանկանը նրա մոր հետ: Նրանք երեսն ի վայր խոնարհվելով երկրպագեցին նրան և իրենց նվերները՝ ոսկի, զմուռս և կնդրուկ (խունկ) մատուցեցին: Նրանք չվերադարձան Հերովդեսի մոտ, որովհետև նրանց երազում զգուշացրել էր, որ ցանկանում է սպանել նորածին երեխային և ուրիշ ճանապարհով գնացին իրենց երկիրը:



ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ցերեկը և Գիշերը Աստծո Պարգևներն են

Երբ առավոտյան արթնանում ենք, ուրախանում ենք տեսնելով շողշողացող արևը: Օրվա վերջում, երբ արևը մայր է մտնում, լուսինը և աստղերը հայտնվում են գիշերային երկնքում, և մենք արդեն հոգնած ենք:

Ահա որոշ գործողություններ, որ կատարում ենք ցերեկվա և գիշերվա ընթացքում: Դրանք ցույց են տալիս, որ մենք գնահատում ենք Աստծո պարգևները՝ ցերեկը և գիշերը:

Յուրաքանչյուր գործողությունը գծով միացրու համապատասխանող նկարին:

Քնելուց առաջ հեքիաթներ լսել

Նախաճաշել

Առավոտյան աղոթք ասել

Դպրոցում խաղալ ընկերների հետ

Նայել ասպղերին երկնքում

Քնել

Շնորհակալական երգեր

Եկեղեցին օգնում է մեզ հիշել, թե որքան հրաշալի է, որ Աստված ստեղծել է արևը, լուսինը և աստղերը: Ահա մի երգ, որ երգում ենք եկեղեցում կամ տանը և շնորհակալություն հայտնում Աստծուն մեզ լույս պարգևելու համար:

Արևելքից մինչև արևմուտք,
Հյուսիսից մինչև հարավ,
Աշխարհի բոլոր ազգեր,
Օրհնեցե՛ք արարածների Արարչին
նոր օրհնությամբ,
Որ այսօր ծագեցրեց արևի լույսը
աշխարհի վրա:



- *Շրջագծի՛ր այն բառը, որը քեզ կհիշեցնի Աստծո մասին:*
- *Արև բառի վրա նկարի՛ր արեգակ:*
- *Այժմ քո դեմքը նկարի՛ր կողմնացույցի կենտրոնում:*

Սուրբ Ներսես Շնորհալին գրել է առավոտյան աղոթք, որպեսզի դու երգես այն: *Ընդգծի՛ր բոլոր այն բառերը, որոնք մեզ մտածել են տալիս լույսի մասին:*

Լույսի առավոտ,

Արդար արեգակ,

Թող քո լույսը ծագի ինձ վրա:

Հոգևոր Բառարան

Ա ր ա ր ի չ

Աստված,
Ով ստեղծել է
ամեն ինչ:

Գտի՛ր այս երգը մյուս էջում և երգի՛ր ուսուցչի հետ:



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս շաբաթվա դասը նվիրված է երկնքում Աստծո ստեղծած լուսատուների ճանաչմանը: Արևը՝ ցերեկը լուսավորելու, իսկ լուսինն ու աստղերը՝ գիշերվա մթությունը լուսավորելու համար են ստեղծված: Մեր դասի պատմության համար ընտրված ավետարանական հատվածը ընդգծում է Բեթղեհեմում հովիվների փորձառությունը, ովքեր հսկում էին իրենց ոչխարների հոտն աստղալից երկնքի տակ (Ղուկաս 2:8-14), ինչպես նաև երեք մոգերի ճամփորդությունը, ովքեր առաջնորդվեցին պայծառ աստղով և եկան Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքը՝ գտնելու նորածին արքային (Մատթեոս 2:1-12):

Երեխաների համար շատ բնական է նկատել արևի ծագումը և մայր մտնելը, լուսնի և աստղերի երևումը գիշերային երկնքում և լուսնի ամսական փոփոխումները: Ամենօրյա այս կարգավորությունները երբեմն չափահասների կողմից սովորական բան է ընդունվում: Մինչդեռ անհրաժեշտ է ամեն անգամ գիտակցել, որ թե՛ արևը, թե՛ լուսինը և թե՛ աստղերը չեն կարող ծագել առանց Աստծո կամքի: Նա է, որ պարգևել է մեզ այդ լուսատուները և շարունակում է նրանց միջոցով կյանք տալ աշխարհին: Մեր Եկեղեցու Գիշերային ժամերգության աղոթքներից մեկում ասվում է.

«Առաքի՛ր մեզ Քո խաղաղության հրեշտակին, Ամենազոր Տեր, որ գալով անխռով պահի մեզ ցերեկը և գիշերը, արթուն և քնած ժամանակ: Դու ես Տերը և Արարիչը լույսի և գիշերի, և մենք աղոթում ենք Քեզ, Տեր Աստված մեր, խաղաղություն պարգևիր մեզ գիշերային հանգստյան այս ժամին, որպեսզի արթնանալով առավոտյան լույսից պաշտենք և փառավորենք Ամենասուրբ Երրորդությանդ, այժմ և հավիտյան. ամեն»:

Այս առաջարկությունները կօգնեն ձեր երեխային հասկանալու և գնահատելու Աստծո լույսի պարգևների արժեքը՝ կյանքի գոյատևման և Իր արարածների երջանկության համար:

1. Ձեր ընտանիքի հետ ողջունե՛ք յուրաքանչյուր նոր օրվա գալը՝ առավոտյան առ Աստված փառաբանական ու գոհաբանական կարճ աղոթքով: Երեխաների հետ կարելի է երգել «Առավոտ լուսո» երգը:
2. Ձեր երեխայի հետ զրուցե՛ք արեգակի օգտակար հատկությունների մասին, երբ չորացնում եք ձեր հագուստները դրսում, երբ քաղում եք բանջարեղենի ու մրգերի բերքն ու բարիքը արևաշատ դաշտերից ու այգիներից և երբ ջերմանում եք արևի ճառագայթներից ձմռան ցուրտ օրերին: Նրա ուշադրությունը հրավիրեք լուսնի և աստղերի լույսի վրա, երբ չկա էլեկտրական որևէ լույս գիշերը լուսավորելու համար:
3. Թող ձեր երեխան պատմի ձեզ երեք մոգերի պատմությունը: Հարցրե՛ք, թե ինչն օգնեց նրանց ճանապարհին հեշտությամբ գտնելու նորածին արքային:
4. Ձեր երեխան գուցե ցանկանա նկարել Բեթղեհեմի աստղազարդ երկինքը, երբ հովիվները հրեշտակներից լսեցին Հիսուսի ծննդյան բարի լուրը:

ԴԱՍ 3

ԱՍՏՎԱԾ ՍՏԵՂԾԵՑ ՋՈՒՐԸ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

«ԴԱԼԱՐ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՆԱ ԻՆՁ ԲՆԱԿԵՑՐԵՑ ԵՎ ՀԱՆԴԱՐՏ ՋՐԵՐԻ ՄՈՏ ԻՆՁ ՄՆՈՒՑԵՑ»:

Սաղմոս 22:3

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ջուրն Աստծուց մեզ տրված հիանալի նվեր է: Ջուր կարելի է գտնել շատ վայրերում: Նայի՛ր նկարներին: Ցո՛ւյց տվեք պատկերված բոլոր այն վայրերը, որտեղ կարող ես ջուր գտնել, և անվանի՛ր դրանք:

Ջուրն անհրաժեշտ է մեր կյանքի համար:

Մենք ջուր ենք խմում ծարավելիս:

Ջրով լվանում ենք մեր կեղտոտ ձեռքերը ճաշից առաջ:

Ծառերը, բույսերը, ձկները և կենդանիները նույնպես չեն կարող ապրել առանց ջրի:

Նկարի՛ր մի բան, որը ցույց տա, թե ինչպես կցանկանաս օգտագործել ջուրը:

Հիսուսն իր ընկերների հետ քայլում էր Գալիլիայի ծով կոչվող լճի մոտով: Ի՞նչ ես կարծում, նրանք ի՞նչ գտան ջրում:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Անակնկալ Գալիլիայի ծովում

Ըստ Ղուկասի 5:1-4

Ընթերցի՛ր պատմությունն ուսուցչի հետ:

Հիսուսն ուսուցանում էր Գալիլիայի ծովեզերքում: Այնտեղ կային որոշ ձկնորսներ: Նա մտավ Սիմոնի նավակը և այնտեղից խոսեց մարդկանց հետ:

«Սիմո՛ն, քշի՛ր նավակը ծովակի ավելի խորը մասերը, և ձեր ուռկանները գցե՛ք ձուկ որսալու համար», - ասաց Տերը: Սիմոնը ցնցվեց և ասաց. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր չարչարվեցինք և ոչինչ չբռնեցինք: Այսօր էլ ձուկ չենք բռնի: Բայց քո խոսքի համար ուռկանները նորից կգցենք»:



Ժամանակից շուտ Սիմոն Պետրոսը և իր եղբայրը՝ Անդրեասը, սկսեցին քաշել ուռկանները: Եվ, ո՞վ զարմանք. նրանք չէին կարողանում դուրս քաշել, որովհետև ձկների առատությունից ուռկանները պատռվում էին: «Եկե՛ք, Հակոբո՛ս, Հովհաննե՛ս: Շա՛տ ձուկ ենք բռնել: Հասե՛ք, օգնե՛ք դուրս քաշենք ուռկանները»:



Հովհաննեսը և Հակոբոսը արագ հասան օգնության: «Աչքերիս չեմ հավատում, - ասաց Հովհաննեսը, - «Երկու նավակներն էլ լիքն են, և քիչ էր մնում խորտակվեինք: Շո՛ւտ արեք, ծովից դո՛ւրս բերեք նավակները»:

Երբ ապահով ափ իջան, Սիմոն Պետրոսը Հիսուսի ծնկներին ընկավ և ասաց. «Ես արժանի չեմ սրան, բայց Դու կատարեցիր»: Նրանք շատ վախեցան: Հիսուս ասաց. «Սիմո՛ն, մի՛ վախեցիր, սրանից հետո դու պիտի ձկների փոխարեն մարդկանց որսաս»:

Տեքստի կարմիր տառերը հերթով գրի՛ր ներքևի գծիկների վրա: Այսպիսով կգտնես այն պատճառը, որի համար Աստված ստեղծեց ջուրը:

Ա — — — — — ծ ա — — — ծ — — ջ — — — — — — ղ — — ի

— ո — — — է — — — — — — հ — — — — — :

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ջուրը մեր կյանքում

Աստծո ստեղծած ջուրը թանկարժեք է: Մենք շնորհակալ ենք Աստծուց, երբ խնամքով ենք օգտագործում ջուրը և տալիս ենք բոլոր կենդանի էակներին: Նկարները ցույց են տալիս, թե մարդիկ ինչի համար են օգտագործում ջուրը:

- Նայի՛ր յուրաքանչյուր պատկերին և գտի՛ր այն նկարագրող նախադասությունը:
- Գծով միացրո՛ւ նկարը նախադասության հետ:
- Մատիտով նշան դիր այն նկարների կողքին, որոնք ցույց են տալիս, թե արդյոք մարդիկ խնամքով են գործածում ջուրը:

Ինչքա՜ն լավ է այստեղ ծուկ բռնելը:

Ես ջուր խմում եմ, երբ շատ եմ ծարավում:

Արմենը վատնում է ջուրն ատամները լվանալիս:

Մենք աղոթում ենք անձրևների համար:

Աղբը լճում թափելն աղտոտում է ջուրը:

Կաթացող ծորակը նորոգելով խնայում ենք ջուրը:

ՋՈՒՐՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ջուրը եկեղեցում օգտագործվում է տարբեր առիթներով:

Ջուրն օրհնվում է Սուրբ Ծննդյան տոնին:

Երեխաները մկրտվում են օրհնված ջրում:

Ավագ Հինգշաբթի օրը ջուրն օրհնվում է Ոտնլվայի արարողության համար:

Քահանան լվանում է իր ձեռքերը Սուրբ Պատարագի սկզբում:

Նկարի՛ր այստեղ քո մկրտության նկարը:

Հոգևոր Բառարան

Մ կ ր տ վ ե լ

Ջրով լվացվել եկեղեցում՝ դառնալու համար Աստծո զավակ:

ՋՐՕՐՀՆԵՔ

Ահա մի աղոթք, որը երգվում է, երբ քահանան օրհնում է ջուրը: Նա օրհնում է ջուրը Սուրբ Խաչով և Սուրբ Ավետարանով և Սրբալույս Մյուռոնով:

Ուսուցչի հետ երգի՛ր աղոթքը:



Գրի՛ր բաց թողնված երեք բառերը նախադասության ճիշտ տեղերում:

Սուրբ Հոգու

Որդու

Հոր



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասում ձեր երեխան խորացնում է իր իմացությունը, որ Աստված ստեղծել է ջուրը կենդանի բոլոր էակների համար: Վարժությունների միջոցով, որոնցում ներկայացված էր ջրի զանազան կիրառումները, դասը նպատակ ունի ամրապնդել երեխայի մեջ այն գիտակցությունը, որ ջուրը էական նշանակություն ունի կյանքի, մաքրության և երջանկության համար: Ղուկասի Ավետարանի պատմությունն առատ ձկնորսության մասին երեխաների համար ընդգծում է, որ լճերի ու գետերի աստվածապարգև ջրում աճեցնում է շատ կենդանիներ՝ մարդկանց ուրախության և ապրուստի համար: Երեխաները նաև սովորեցին, որ Եկեղեցին օրհնում է ջուրը՝ ի նշան մեզ տրված այդ մեծ պարգևի: Նրանք սովորեցին Սուրբ Ծննդյան տոնին կատարվող Ջրօրհնեքի արարողության մասին՝ ի հիշատակ Հորդանան գետում Հիսուս Քրիստոսի մկրտության, ջրի օրհնության մասին՝ Ավագ Հինգշաբթի օրվա Ոտնլվայի արարողության ընթացքում՝ հիշելով Հիսուսի ձեռքերով աշակերտների ոտքերի լվացումը, ինչպես նաև ջրի օրհնության մասին, որում իրենք մկրտվել են: Նրանք նաև իմացան, որ Սուրբ Պատարագի սկզբում քահանան ջրով լվանում է իր ձեռքերը:

Ահա մի քանի առաջարկություններ՝ ջրի մասին այս գաղափարներն ամրապնդելու համար:
Կարելի է ընտրել և տանը՝ ընտանիքի հետ կատարել նշվածներից որոշները.

1. Միասի՛ն ընթերցեք Ղուկասի Ավետարանի 5:1-11 հատվածը: Թող ձեր երեխան մի նկար պատկերի Ավետարանի անակնկալ ձկնորսության մասին և ձեզ պատմի պատմությունն իր սեփական բառերով:
2. Զրուցե՛ք ձեր երեխայի հետ ջրին խնամքով վերաբերվելու կարևորության մասին: Թող նրանք առաջարկեն եղանակներ՝ առանց վատնումի ջրօգտագործման վերաբերյալ: Նրանք կարող են կազմել փոքր պատի թերթեր կամ նշաններ՝ խոհանոցում կամ այլուր փակցնելու համար՝ իբրև հիշեցում:
3. Փորձե՛ք ընտանիքով երգել ջրի օրհնության մաղթանքը, որ նրանք դպրոցում սովորել են, որպեսզի կարողանաք մասնակցել եկեղեցում «Ամէն, ալէլուիա»-ի երգեցողությանը: Բառերը և նոտաները կգտնեք այս էջի վերևում:
4. Սուրբ Ծննդյան տոնին, հունվար 6-ին, երբ օրհնվում է ջուրը, ձեզ հետ ունեցեք մի փոքր շիշ՝ եկեղեցուց օրհնված ջուր տուն բերելու համար:

ՄԵՆՔ ԳՈՎՈՒՄ ԵՆՔ ԱՍՏԾՈՒՆ ԻՐ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«ԱՄԵՆ ԺԱՄ ՏԻՐՈՋՆ ՕՐՀՆԵՐԳԵՄ»:
Սաղմոս 33:2

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ամեն մարդ սիրում է գովասանք ստանալ, երբ մի լավ բան է անում: Ասում ենք. «Կեցցե՛ս», «Հրաշալի գործ արեցիր» կամ «Գերազանց է», «Ապրե՛ս»: Կարելի է մարդկանց գովել այլ կերպ ևս:

Նայի՛ր այս նկարներին և գտի՛ր, թե որ նկարում են մարդիկ գովասանքի արժանանում: Ասա՛, թե ինչպես է դա կատարվում:
Ուրախ դեմք ☺ նկարի՛ր այդպիսի նկարների կողքին:

Ինչպե՞ս կցանկանայիր, որ քեզ գովեին: Շրջագծի՛ր այն բառը, որը կնկարագրեր այն:

Գրկախառնում **Ծափահարում** **Պարգևատրում** **Կեցցե՛ս**

Մենք գովում ենք Աստծուն հատուկ կերպով: Նայի՛ր հաջորդ էջը՝ սովորելու այդ հատուկ կերպի մասին:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

«Օրհնեցե՛ք Աստծուն այն ամենի համար, ինչ նա ստեղծեց»:

Սաղմոս 148

Օրհնեցե՛ք Տիրոջը երկնքից, օրհնեցե՛ք նրան բարձունքներից:

Օրհնեցե՛ք նրան, նրա բոլո՛ր հրեշտակներ,
օրհնեցե՛ք նրան,
նրա բոլո՛ր զորություններ:

Օրհնեցե՛ք նրան, արեգա՛կ և լուսի՛ն,
օրհնեցե՛ք նրան, բոլո՛ր աստղեր և լույս:

Օրհնեցե՛ք անունը Տիրոջ,
քանզի նա ասաց՝ և դրանք ստեղծվեցին,
նա հրամայեց՝ և դրանք հաստատվեցին:

Հուր և կարկուտ, ձյուն և սառնամանիք,
հողմ ու մրրիկ,
լեռներ և բոլո՛ր բլուրներ,
պտղաբե՛ր ծառեր և բոլո՛ր մայրիներ,
գազաններ և ամեն տեսակ անասուններ,
սողուններ և ամեն տեսակ թևավոր թռչուններ,
երկրի թագավորներ՝ զորքերով հանդերձ,
իշխաններ և երկրի բոլո՛ր դատավորներ,
երիտասարդներ ու կույսեր, ծերեր ու մանուկներ
օրհնեցե՛ք անունը Տիրոջ:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մենք գովում ենք Աստծուն աղոթքով

Մենք գովում ենք Աստծուն՝ աշխարհը ստեղծելու համար: Մենք փառաբանում ենք Նրան մեզ կյանք տալու և այն վայելելու համար: Մենք օրհնում ենք Աստծուն, երբ աղոթում ենք:

Աղոթքը նման է իրար հետ խոսող երկու ընկերների:
Աղոթելիս մենք խոսում ենք Աստծո հետ և լսում Նրան:
Մենք կարող ենք աղոթել ամենուր և ամեն ժամ:
Աստված ուրախանում է, երբ մենք հաճախ խոսում ենք Նրա հետ:

Նկարները պատկերում են տարբեր տեղերում աղոթող մարդկանց:

Շրջագծի՛ր այն նկարը, որը ցույց կտա նաև քո աղոթքի վայրը:

Գծանկարի՛ր ուրախ դեմք ☺ այն նկարի կողքին, որը ցույց կտա, թե որտեղ ես ամենաշատը աղոթում:

Ե ԿԵՂԵՑՈՒՄ ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ

Մենք եկեղեցում աղոթում ենք միասին: Եկեղեցու կառույցը հատուկ մի վայր է, որտեղ մենք հավաքվում ենք աղոթքի: Եկեղեցում փառաբանում ենք Աստծուն տարբեր եղանակներով:



Ահա Աստվածաշնչից քաղված փառաբանական մի սաղմոս, որ երգվում է եկեղեցում: Այն երգի՛ր քո ընկերների հետ և փա՛ռք տուր Աստծուն:

«Ամեն ժամ Տիրոջն օրհներգեմ, նրա օրհնությունն ամեն ժամ բերանումս լինի»:

Սաղմոս 33:2

Մենք փառաբանում ենք Աստծուն Սուրբ Պատարագի ժամանակ

Հիսուսը հատուկ ճաշի նստեց իր ընկերների հետ Վերջին Ընթրիքի ժամանակ: Նա օրհնեց հացը, գինին և բաժանեց իր աշակերտներին:

Այդ հատուկ ճաշին մենք մասնակցում ենք ամեն անգամ, երբ գնում ենք եկեղեցի և ներկա գտնվում Սուրբ Պատարագին: Պարզելու համար, թե ինչպես ենք փառաբանում Աստծուն այս արարողության ընթացքում, աղյուսակի աջ կողմից ընտրի՛ր ճիշտ բառը և լրացրո՛ւ յուրաքանչյուր նախադասությունը:

Մենք _ _ _ _ _ ենք փառաբանական երգեր:

Մենք _ _ _ _ ենք Աստծո խոսքը:

Մենք փառք ենք մատուցում Տիրոջը, երբ _ _ _ _ _ _ ենք հացը և գինին Սուրբ Հաղորդության ժամանակ:

լսում

ստանում

երգում

Հոգևոր Բառարան

Փառաբանել

Պատվել և մեծարել Աստծուն:

Սա այն օրհներգն է, որ երգվում է Պատարագի արարողության վերջում: Գուցե դու արդեն այն գիտես: Ուրախությա՛մբ երգիր այն ամեն անգամ, երբ եկեղեցում կլինես Սուրբ Պատարագի ժամանակ:



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասի կենտրոնական գաղափարն է Աստծուն փառաբանելը Իր սիրո և ստեղծագործության ամբողջ բարիքների համար: Ուշադրություն պետք է դարձնել, թե ինչպես ենք գովում մեկս մյուսին մեր արած լավ արարքների համար: Նմանապես, մարդկային էակները կոչված են փառաբանելու Աստծուն՝ Իր սիրո համար, որ այս հրաշալի աշխարհը պարգևեց մեզ: 148-րդ սաղմոսը հստակորեն ներկայացնում է մեր հավատալիքը, որ ամբողջ ստեղծագործությունն օրհնում է Աստծուն: Այս փառաբանությունը մատուցվում է Աստծուն՝ արարչագործության թե՛ կենդանի և թե՛ անկենդան արարածների կողմից, երբ յուրաքանչյուրն իրականացնում է այն նպատակը, որի համար ստեղծված է: Ի՞նչ սրտագին պատգամ է սա մեծացող երեխայի համար՝ իմանալու, որ իբրև Աստծո հրաշալի զավակներ, նրանք իրենց օրհնությունն են մատուցում Տիրոջը: Նրանք նաև սովորեցին, թե ինչպես է եկեղեցին փառաբանում Աստծուն, երբ միասին հավաքվում են Աստծո տան մեջ, հատկապես Սուրբ Պատարագին մասնակցելու համար: Օգնեք ձեր երեխային զարգացնելու Աստծուն փառաբանելը հետևյալ կերպերով.

1. Քաջալերե՛ք ձեր երեխային լավ արարքների ու ձեռքբերումների մեջ՝ գովելով նրան:
2. Սովորեցրե՛ք նրան շնորհակալ լինել Աստծուց կյանքի պարզ ու պատկառելի բաների համար՝ ասելով «Փա՛ռք քեզ Տեր» կարճ աղոթքը:
3. Հաճախակի գնացեք եկեղեցի և աղոթեք Աստծուն՝ հատկապես կիրակնօրյա Սուրբ Պատարագի ժամանակ:

ԳԼՈՒԽ Բ

Աստված ինձ սիրով է ստեղծել

Աստված ինձ սիրով է ստեղծել : Նա տվել է ինձ աչքեր տեսնելու համար, ականջներ լսելու համար, բերան խոսելու համար, ձեռքեր ու ոտքեր խաղալու համար: Աստված օգնում է ինձ մեծանալ, սովորել և սիրել Իրեն:

ԳԼՈՒԽ Բ

Աստված ինձ սիրով է ստեղծել

Ծնողների համար

Այս տարիքում երեխաները մեծանում են շատ արագ: Նրանց ֆիզիկական աճն ուղեկցվում է ունակությունների զարգացմամբ, և նրանց ինքնությունը, որպես եզակի անձերի, ևս ստեղծվել է Աստծո կողմից:

ԵՍ ՀՐԱՇԱԼԻ ԵՄ ՍՏԵՂԾՎԵԼ

«ԳՈՀՈՒԹՅՈՒՆ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑԵՄ ՔԵԶ, ՏԵ՛Ր ՔԱՆՋԻ ՍՔԱՆՉԵԼԻ ԿԵՐՊՈՎ ՍՏԵՂԾԵՑԻՐ ԻՆՁ»:

Սաղմոս 138:14

Հայտնագործենք

Նայի՛ր այս նկարներին: Ո՞րը կարելի է **ուտել** կամ **ճաշակել**, ո՞րը՝ **լսել**, ո՞րը՝ **շոշափել** կամ **զգալ**, որի՞ց՝ **հոտոտել**, և որո՞նց կարելի է **տեսնել**: Յուրաքանչյուր նկարը գծով միացրո՛ւ իր բառին:

տեսնել

լսել

ուտել

հոտոտել

շոշափել

Եռանկյունում նկարի՛ր քաղցրավենիք, որը շատ կցանկանայիր ուտել:

Եկե՛ք քայլենք պարտեզում որոշ մարդկանց հետ, ովքեր տեսան, լսեցին, հոտոտեցին, շոշափեցին և համտեսեցին շատ բարիքներ:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Զբոսանք Եդեմի Պարտեզում

Ըստ Ծննդոց 1:26-31

**Աստված Իր նման ստեղծեց Ադամին ու Եվային:
Նրանք ապրում էին Աստծո հետ Եդեմի պարտեզում:**

**Ադամը սիրում էր Եվայի հետ քայլել պարտեզում:
Արևը շողում էր նրանց աչքերում: Այնքան շատ բան կար տեսնելու:**

Նրանց ականջները բժժում էին շատ ձայներից՝ թռչունների ծլվլոցից, մեղուների բզզոցից, կովերի բառաչից, առյուծների մռնչյունից և հսկա ժայռերին բախվող ջրի ալիքներից:

Եվան սիրում էր, երբ ջրվեժի զով ջուրը ցողվում էր դեմքին և օդում տարածվում էր ծաղիկների անուշ հոտը:

Ադամը շոշափում էր և տեսնում, թե արդյոք հասել են պտուղները ծիրանի ծառին: Նա մի քանի հատ քաղեց, որպեսզի Եվան համտեսի:

Երբ արևը մայր էր մտնում, լուսինն էր սկսում ժպտալ նրանց, և պսպղուն աստղերը լուսավորում էին մթնած երկինքը:

Երբ առավոտյան արթնացան, Աստված դեռ նրանց հետ էր: Տերն ասաց նրանց. «Նայե՛ք, այս ամենը տվել եմ ձեզ, լավ խնամե՛ք և վայելեք դրանք»:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մենք օրհնում ենք Աստծուն մեր բոլոր զգայարաններով

Եկեղեցում մենք օգտագործում ենք մեր բոլոր զգայարանները Աստծուն պաշտելու համար: Նայի՛ր այս նկարներին:

Քանի՞ մոմ ես տեսնում խորանի վրա:
Շրջագծի՛ր ճիշտ պատասխանը.

8 **12** **9**

Ո՞ւմ ես տեսնում խորանի սրբապատկերում:
Շրջագծի՛ր երկու ճիշտ անունները.

Հովհաննես **Մարիամ Աստվածածին** **Հիսուս**

Մենք լսում ենք սարկավագի կողմից կարդացվող Աստծո Խոսքը: Նշի՛ր այն գրքի անունը, որը նա կարդում է.

շարակնոց **Ավետարան**

Ես կարող եմ հոտոտել _____ անուշ հոտը,
որը մատուցում ենք Աստծուն:

Գրի՛ր ճիշտ բառը դատարկ թողնված տողի վրա.

մոմ **խունկ**

Ի՞նչ է աղջիկը շոշափում իր ձեռքերով:

Շրջագծի՛ր ճիշտ բառը.

խաչ **մոմ**

Հաղորդություն ստանալիս
ի՞նչ ենք ճաշակում:

Շրջագծի՛ր **երկու** ճիշտ բառերը.

գինի **խաղող** **հաց**

Հոգևոր Բառարան

Մարիամ Աստվածածին

Հիսուսի մայրը:

ԽԱՉԻ ՆՇԱՆԸ

Հայ Եկեղեցում մենք օգտագործում ենք հատուկ նշան ցույց տալու համար, որ մենք պատկանում ենք Հիսուս Քրիստոսին: Ձեր աջ ձեռքի առաջին երեք մատերը իրար միացրեք, ցույց տալով, որ մենք սիրում ենք ու հավատում Հայր Աստծուն, Որդուն՝ Հիսուս Քրիստոսին և Սուրբ Հոգուն: Արտասանի՛ր հետևյալ բառերը և օգտագործի՛ր քո աջ ձեռքը խաչակնքվելու համար՝ ըստ յուրաքանչյուր նկարում ցույց տրվածի:

Հանուն Հոր

և Որդվո

և Հոգվույն

Սրբո

Ամեն

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասին ձեր երեխան սովորեց գնահատել տեսնելու, շոշափելու, ճաշակելու, հոտոտելու և լսելու հինգ զգայարանները, որոնք մեզ տրված Աստծո պարգևներն են: Ծննդոց 1:26-31, 2:8-9 համարների վրա հիմնված Աստվածաշնչային պատմության մեջ նրանք սովորեցին, որ Ադամը և Եվան տեսան, լսեցին, ճաշակեցին, շոշափեցին և հոտոտեցին Աստծո գեղեցիկ ստեղծած բուսական ու կենդանական աշխարհը, հողը, ջուրը և այն ամենը, ինչ գտնվում է երկնքում: Ահա որոշ բաներ, որ կարող եք կատարել միասին նրանց հոգևոր աճին նպաստելու համար:

1. Հարցրեք ձեր երեխային, որ վերապատմի դպրոցում կարդացած ու լսած Աստվածաշնչային պատմությունը: Այնուհետև բացեք Աստվածաշնչի Ծննդոց 1:26-31 համարները և այն ընթերցեք միասին:
2. Մանուկներն ուրախանում են իրենց մեծանալով ու զարգացող ֆիզիկական կարողություններով: Քաջալերեք ձեր երեխային անվանելու որոշ բաներ, որ նրանք տեսնում են ու վայելում տանը կամ միջավայրում: Որո՞նք են նրանց սիրած ուտելիքները և որո՞նք են այնպիսինները, որ չեն սիրում ուտել: Որո՞նք ենք նրանց նախընտրելի ձայները, հոտերը: Նրանց մարմնի ո՞ր մասերն են զգում շոշափելը և ո՞ր մասերն են օգտագործվում շոշափելու համար: Օգնեք նրանց հիշել, որ դրանք Աստծո շնորհներն են, և դրանց պետք է վերաբերվել խնամքով ու հարգանքով: Աստված հրավիրեց Ադամին ու Եվային պատասխանատվությամբ հոգ տանելու այն ամենին, ինչ Աստված ստեղծեց: Այն նաև նշանակում է, որ մենք պետք է խնամենք մեր սեփական մարմինը և ի բարի օգտագործենք մեր կարողությունները Աստծո փառքի համար:
3. Ձեր երեխայի հետ մի քանի անգամ փորձեք խաչակնքվել՝ անսալով մեր Եկեղեցու հայրերից Վարդան վարդապետի խորհրդին, որ ասում է. «Ծնողնե՛ր, երբ ձեր երեխան կարողանա ճիշտը տարբերել սխալից, սովորեցրեք նրան խաչակնքվել...»:
4. Եթե ձեր ընտանիքը վերջերս ներկա է գտնվել մկրտության, միասին հիշե՛ք, թե ինչ է կատարվել արարողության ընթացքում: Երեխայի մկրտվելուց հետո քահանան մյուռոնով խաչանիշ դրոշմում է երեխայի մարմնի ինը մասերը: Ձեր օգնությամբ թող նրանք անվանեն մարմնի դրոշմվող մասերը (ճակատ, աչքեր, ականջներ, քիթ, բերան, սիրտ, ձեռքեր, թիկունք և ոտքեր): Հարցրե՛ք, թե ինչպե՞ս պետք է օգտագործենք մեր մարմինները, որոնք Աստված օրհնեց: Օգնե՛ք նրանց որոշում կայացնելու հետևյալի հարցերում.
   - Օգտագործել աչքերը՝ նայելու լավ բաներին և հեռու մնալու վատ բաներից:
   - Օգտագործել բերանը՝ խոսելու ճշմարտությունը և բարի խոսքերը, ուտելու այնպիսի սնունդ, որը առողջարար է և ոչ թե վնասակար մարմնի համար:
   - Օգտագործել ականջները՝ լսելու Աստծո Խոսքը և մերժել չար խոսքերը:
   - Օգտագործել ձեռքերը՝ կատարելու օգտակար գործեր և չվիրավորելու որևէ մեկին:
5. Թույլ տվեք, որ ձեր երեխան ընտրի վերոնշյալներից մեկը և գրի, թե հատկապես ինչ պիտի անի իրագործելու իր որոշումը: Տեղադրե՛ք նրա գրածը հարմար մի տեղ, որ նա կարողանա տեսնել և հիշել:
6. Ձեր երեխաներին սովորեցրեք իրենց օրն սկսել Սաղմոս 89:17 տողերով, որը որպես աղոթք արտասանվում է Առավոտյան ժամերգության սկզբում.

«Ուղղի՛ր մեր ձեռքերի գործերը, Տե՛ր, մեր ձեռքերի գործերը հաջողությամբ պսակիր. Ամեն»:

ԱՍՏՎԱԾ ՃԱՆԱՉՈՒՄ Է ԻՆՁ ԻՄ ԱՆՈՒՆՈՎ

«ՏԵՐՆ ԱՍՈՒՄ Է. «... ՓՐԿԵՑԻ ՔԵԶ ԵՎ ԿՈՉԵՑԻ ՔՈ ԱՆՈՒՆՈՎ, ԹԵ ԻՄՆ ԵՍ»:

Եսայի 43:1

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Եկավ սեպտեմբերի 1-ը և դպրոցները բացվեցին: Արմենը մոր ձեռքից բռնած առաջին անգամ էր մտնում դպրոց:

Նա մի փոքր շփոթված էր, քանի որ չէր ճանաչում շատերին:

«Բարի լո՛ւյս, Արմեն», - լսվեց մեկի ձայնը, - «Բարի գալո՛ւստ առաջին դասարան: Ուրախ եմ, որ այստեղ ես»:

«Ինչ լա՜վ է, որ ուսուցիչը գիտի իմ անունը: Հազիվ մեկը ճանաչեց ինձ», - ցածրաձայն ասաց Արմենն իր մորը:

Անունները կարևոր են: Քո ծնողներն ընտրել են քո անունը հատուկ քեզ համար: Դու քեզ լավ ես զգում, երբ մարդիկ կանչում են քեզ քո անունով: Գրի՛ր քո անունը ներքևի աստղի վրա: Ապա զարդարի՛ր քո անունը կրող աստղը:

Պարզի՛ր, թե ինչպես Մարիամը և Հովսեփն ընտրեցին Հիսուսի անունը:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ
Հիսուսի Անվանակոչությունը

Ըստ Ղուկասի 2:21-40

Կարդա՛ պատմությունն ուսուցչի հետ: Օգտագործի՛ր բառապաշարի բառերը և գրի՛ր դրանք իրենց ճիշտ տեղերում:

Բառապաշար

Հիսուս
հրեշտակ
անուն

Մարիամն արթնացավ արևի հետ, որ կերակրի երեխային: «Մարիա՛մ, այսօր ութերորդ օրն է երեխայի ծննդյան: Ժամանակն է նրան _ _ _ _ տալու», — ասաց Հովսեփը: «Հովսե՛փ, Գաբրիել հրեշտակն ասաց, որ նրա անունը Հիսուս դնենք», — ասաց Մարիամը:

«Մարիա՛մ, — ասաց Հովսեփը,- երազումս լսեցի _ _ _ _ _ _ _ _ ձայնը. «Դու պիտի նրան _ _ _ _ _ կոչես, որովհետև նա պիտի փրկի իր ժողովրդին»: Այնուհետև, Մարիամը և Հովսեփն իրենց գիրկն առան մանուկին, աղոթեցին և նրան Հիսուս կոչեցին:

Երբ Հիսուսի քառասուն օրերը լրացան, Մարիամը և Հովսեփը Բեթղեհեմից էշին նստած գնացին _ _ _ _ _ _ _ _ : Նրանք, օրենքի համաձայն, Հիսուսին պիտի բերեին Տաճար և շնորհակալություն հայտնեին Աստծուն:

Տաճարում _ _ _ _ _ _ անունով մի բարի ծերունի մոտեցավ նրանց: Նա ուրախությամբ նայեց Հիսուսին, ապա գրկեց նրան և աղոթեց.

«Շնորհակալ եմ, Աստված իմ, քո խոստումը պահելու համար: Դու ասացիր, որ չպիտի մեռնեմ, մինչև տեսնեմ _ _ _ _ _ _ : Այժմ նա իմ գրկում է:

Երբ նա մանուկին վերադարձրեց իր մորը, նայեց նրա աչքերին և ասաց. «Քո որդին _ _ _ _ _ _ _ _ _ է: Աստված մեծ ծրագիր ունի նրա համար:



Բառապաշար

Երուսաղեմ

Սիմեոն

փրկիչ

յուրահատուկ

Հոգևոր Բառարան

Փրկիչ

Հիսուսը, Ով աշխարհ եկավ:

ՎՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ի մ Անվանակոչության օրը

Հին ժամանակներում հրեական ընտանիքներում սովորություն կար նորածին երեխաներին անվանակոչել ծննդյան ութերորդ օրը:

Հայ քրիստոնյա ծնողներն իրենց երեխաներին անվանակոչում են մկրտության ժամանակ, քառասնօրեքի մեջ:

Քո մկրտության օրը ծնողներդ քեզ տարան եկեղեցի: Քո կնքահոր հետ հայրդ ու մայրդ քահանային խնդրեցին կատարելու քո մկրտությունը:

Երբևէ տեսե՞լ ես ուրիշ երեխայի մկրտություն:

1. Քահանան օրհնում է մկրտության ավազանի ջուրը:

2. Տեր Հայրը երեխային մտցնում է օրհնված ջրի մեջ երեք անգամ և ասում. «Գևորգն այժմ մկրտվեց հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու»:

3. Երեխան դառնում է Աստծո ընտանիքի անդամ:

Մկրտությունից հետո քահանան ծնողներին տալիս է վկայական:

Գրի՛ր բաց թողնված տեղեկությունները և լրացրո՛ւ քո մկրտության վկայականը: Եթե չկարողանաս ինքնուրույն լրացնել, խնդրիր ծնողներիդ օգնությունը:

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

_____ _____
ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

_____ _____
ՀԱՅՐԱՆՈՒՆ ՄԱՅՐԱՆՈՒՆ

ՄԿՐՏՎԵԼ Է _____
ՕՐ ԱՄԻՍ ՏԱՐԻ

_____
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒՆ

_____
ՄԿՐՏՈՂ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՆՈՒՆ

_____
ԿՆՔԱՀՈՐ ԱՆՈՒՆ

_____
ՄԿՐՏՈՂ ՔԱՀԱՆԱՅԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անունները նշանակություն ունեն

Սովորաբար ծնողներն իրենց երեխային կոչում են պապիկի կամ տատիկի անունով, կամ էլ որևէ սրբի անունով:

Շատ անուններ ունեն հատուկ իմաստ: Օրինակ՝ Կորյուն նշանակում է առյուծի ձագ, իսկ Զվարթ նշանակում է հրեշտակ:

Արդյոք գիտե՞ս, թե ի՞նչ է քո անունը նշանակում: Հարցրո՞ւ քո ծնողներին կամ ուսուցչին և գրի՛ր ներքևի տողի վրա:

Անունս նշանակում է _____

Համապատասխանեցրո՛ւ անուններն ըստ իրենց իմաստների: Հետևի՛ր նշված օրինակներին.

Մարալ	նա, ով արթուն է
Հարություն կամ **Հարութ**	թանկարժեք քար
Գրիգոր	եղնիկ կամ գեղեցիկ աղջիկ
Գոհար	Հիսուս Քրիստոսի հարությունը

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Մեզ իմանում և ճանաչում են մեր անունով: Որպես ծնողներ՝ դուք ունեցել եք ձեր երեխայի համար անուն ընտրելու առանձնաշնորհումը: Գուցե հիշեք, թե ինչպիսի զգուշությամբ կատարեցիք այդ ընտրությունը ձեր կյանքում հայտնված երեխայի համար: Հիսուսի անվանակոչության և նրան Աստծուն ընծայելու պատմության միջոցով մենք հաստատում ենք յուրաքանչյուր երեխայի անունը որոշելու կարևորությունը: Աստվածաշնչի հիշարժան տողը, որ երեխաներն այսօր սովորեցին Եսայի մարգարեությունից, հայտնում է մեզ այն ուրախալի և մխիթարական պատգամը, որ Աստված ճանաչում է մեզ մեր անունով, այսինքն՝ մենք պատկանում ենք Իրեն: Ավետարաններում նույնպես գտնում ենք, որ հրեշտակը հայտնում է այն անունը, որ պիտի դրվեր Մարիամից ծնվող երեխային: Նրա անունը պիտի լիներ Հիսուս, որովհետև նա պիտի փրկեր մարդկանց:

Հայ քրիստոնեական կյանքում կան շատ ավանդույթներ՝ կապված երեխայի անվանակոչության հետ: Ծնողներն իրենց երեխայի անունը դնում են կա՛մ իրենց ընտանիքի սիրելի անդամի կա՛մ էլ որևէ սրբի անունով: Մենք սա անում ենք, որպեսզի երեխան իր աչքի առջև հարազատի կամ սրբի օրինակելի կերպարին նմանվի: Սա նույնպես իմաստ է հաղորդում իրենց անուններին: Սովորաբար մարդիկ իրենց անվանակոչությունը նշում են այն սրբի տոնի օրը, որի անունով իրեն կոչվել են: Օգնե՛ք ձեր երեխային գնահատել և հարգել իր և ուրիշների անունը: Ահա, թե ինչ կարող եք անել:

1. Թող ձեր երեխան պատրաստի մի անվանաքարտ և զարդարի այն մոտավորապես 20սմ x 15սմ չափսի թղթի կտորի վրա: Դրա վրա պետք է գրված լինեն իր անունը, մկրտության օրը, անվանակոչության օրը, այն անձի կամ սրբի անունը, որով կոչել են նրան և նրա անվան նշանակությունը: Ապա քահանային հարցրեք, թե երբ է տվյալ սրբի տոնը և այն ևս արձանագրեք անվանաքարտի վրա: Դա համարվում է նրա Անվանակոչության օրը:
2. Նշեք ձեր երեխայի Անվանակոչության օրը՝ եկեղեցի գնալով: Թող ձեր երեխան լսի իր հովանավոր սրբի պատմությունը: Թող նա իմանա, որ ինչպես խնդրում ենք մեկս մյուսի աղոթքը, այնպես էլ կարող ենք խնդրել մեր հովանավոր սրբի աղոթքը մեզ համար: Կարող եք նրան ցույց տալ նաև իր հովանավոր սրբի նկարը:
3. Ձեր երեխայի հետ միասին աղոթե՛ք Եսայի մարգարեի հետևյալ տողը. «... կոչեցի քեզ քո անունով, թե իմն ես» և հիշեցրեք, որ նա սիրված է և պատկանում է Աստծուն:

ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԼՍԵԼ

«ԻՆՉ ՑՆԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԼՍԵԼ ՏՈՒՐ»:

Սաղմոս 50:10

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Աստված տվել է մեզ երկու ականջ: Մեր ականջներով կարող ենք լսել շատ ձայներ: Նայի՛ր այս նկարներին: Շրջագծի՛ր այն նկարները, որոնք ցույց կտան այն ձայները, որ լսում ես ամեն օր:

Մենք կարող ենք ընտրել լսելու լավ բաներ և մերժել լսելու վատ բաներ: Գրի՛ր *այո* այն նկարների կողքին, որոնք ցույց կտան լսելու լավ բաները և *ոչ* այն նկարների կողքին, որոնք այդքան էլ լավը չեն:

«Ես չեմ ուզում լսել, երբ մայրս կանչում է ինձ»: _____

«Ես կարող եմ պատասխանել Ձեր հարցին, Օրիորդ Անահիտ»: _____

«Ես սիրում եմ լսել, թե Անուշը ինչ է խոսում Անիի մասին»: _____

«Մի՛ շարժվեք, ես Ձեզ համար օգնություն կկանչեմ»: _____

Շրջանակի մեջ նկարի՛ր մի բան, ինչ կցանկանաս լսել: Երբ ավարտես, լսի՛ր Սամվել անունով տղայի պատմությունը, ով լավ էր լսում:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Սամվելը լսում է

Ըստ Ա Թագ. 1:21-28; 2:18-21; 3

Սամվելն իր ծնողների՝ Եղկանայի և Աննայի հետ գնաց Սելով՝ Աստծուն տաճարում երկրպագելու: Սամվելը մնաց Հեղի քահանայի մոտ, որպեսզի օգնի նրան հոգ տանելու Աստծո տանը:

Ամեն օր Սամվելը նայում էր, որ բավարար ձեթ լինի կանթեղի մեջ և բավարար փայտ՝ վառելու համար: Նա ավլում էր, թափ տալիս և փայլեցնում այն ամենը, ինչ կար տաճարում: Գիշերը նաև հսկում էր, որ դուռը ծածկված մնա:

Մի գիշեր բոլոր գործերն ավարտելուց հետո, Սամվելը պատրաստվում էր քնելու: Նա և Հեղին գնացին քնելու իրենց անկողիններում: Բայց մինչ Սամվելը կպառկեր քնելու, հանկարծ մի ձայն լսվեց. «Սամվե՛լ, Սամվե՛լ»:

Սամվելը վեր թռավ իր տեղից, վազեց Հեղիի կողմը և ասաց. «Ահա այստեղ եմ, դու կանչեցիր ինձ»: «Ես չեմ կանչել քեզ», - պատասխանեց Հեղին, - «Հոգնած եմ, Սամվել, վերադարձի՛ր քնելու»:

Այսպես Սամվելը վերադարձավ իր անկողին: Երբ աչքերն սկսեցին փակվել, նա նորից լսեց ձայնը, որ կանչում էր. «Սամվե՛լ, Սամվե՛լ»:

Սամվելը վազեց Հեղիի մոտ: Բայց Հեղին կրկին նրան անկողին ուղարկեց: Սամվելը վերադարձավ քնելու և վեր քաշեց վերմակը: Այդ ժամանակ ձայնը նորից կանչեց. «Սամվե՛լ, Սամվե՛լ»: «Հեղի՛, գալիս եմ», - ասաց Սամվելը: Նա արթնացրեց Հեղիին: Ապա Հեղին ասաց. «Ես քեզ չեմ կանչել, դա պետք է որ Աստված լինի: Այսպես, եթե Տերը կանչի, ասա. «Խոսի՛ր, Տե՛ր, քո ծառան լսում է»:

Նա մեկ անգամ էլ մտավ անկողին, և կրկին լսվեց ձայնը. «Սամվե՛լ, Սամվե՛լ»: Ապա նա ասաց. «Խոսի՛ր, Տե՛ր, քո ծառան լսում է»: Աստված ասաց Սամվելին շատ բաներ: Եվ Սամվելը ուշադիր լսում էր: Նա մեծացավ որպես խելացի տղա և դարձավ առաջնորդ, որովհետև լսեց Տիրոջը:

Լուծի՛ր խաչբառը

Լսի՛ր, երբ ուսուցիչը կարդա յուրաքանչյուր հուշումը: Նայի՛ր մեր պատմության բառերին: Գտի՛ր ճիշտ տառը, շրջագծի՛ր այն, և գրի՛ր իր սյունակում: Ապա գրի՛ր այդ բառը, որ տառ առ տառ հեգեցիր՝ լրացնելու համար ամենաներքևի նախադասությունը:

1. Վերջին տառը **Ս Ա Մ Վ Ե Լ** բառում
2. Առաջին տառը **Ս Ե Լ Ո Վ** բառում
3. Երկրորդ տառը **Հ Ե Ղ Ի** բառում
4. Երրորդ տառը **Խ Ե Լ Ա Ց Ի** բառում



Երբ լսում ենք մեր ծնողներին, ցույց ենք տալիս, որ սիրում ենք նրանք:

Հեղիի նման մեր ծնողները սովորեցնում են մեզ ինչպես __ __ __ __ Աստծուն:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մենք լսում ենք Աստծո խոսքը եկեղեցում

Սուրբ Պատարագի սկզբում մենք լսում ենք Աստծո խոսքը: Սարկավագը կարդում է մի հատված Ավետարանից: Մենք ցույց ենք տալիս մեր սերը Աստծուն մեր պահվածքով, երբ կարդացվում է Ավետարանը: Մենք ուշադրություն ենք դարձնում և լսում երկյուղածությամբ:

Երբ գտնվում ես եկեղեցում, լսի՛ր սարկավագին Ավետարան կարդալիս: Տե՛ս, եթե կարող ես լսել նրա հետևյալ խոսքերը.

Ալելուիա, Օրթի	նշանակում է	**Ալելուիա, ոտքի՛ կանգնեք:**
Պռոսխումե	նշանակում է	**Ուշադրությո՛ւն:**

Ավետարանի ընթերցման վերջում երգում ենք. «Փա՛ռք քեզ, Տեր Աստված մեր»:

Շրջագծի՛ր այն երկու նկարները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես պետք է լսենք Աստծո խոսքը եկեղեցում:

Հոգևոր Բառարան

Ալելուիա

Փառաբանել, գովերգել Աստծուն:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասին ձեր երեխան սովորեց, որ մեր լսելու զգայարանը Աստծո պարգևն է, և մենք պետք է այն լավ օգտագործենք՝ ճիշտ ընտրություն կատարելու համար:

Աստվածաշնչի Ա Թագավորության 1:21-28; 2:18-21 և 3 գլուխներում ներկայացվեց Սամվել անունով տղայի պատմությունը, որի ծնողները նրան ընծայեցին Աստծո ծառայությանը Սելովի տաճարում: Այնտեղ Սամվելը սովորեց հնազանդվել Հեղի քահանային՝ լսելով նրան և կատարելով այն ամենը, ինչ իրեն հանձնարարվում էր: Հեղին օգնեց Սամվելին ուշադիր հետևել այն ձայնին, որ կրկնվելով կանչում էր նրա անունը: Գիտակցելով, որ Աստված էր կանչում Սամվելին, Հեղին ասաց տղային ինչպես պատասխանել Աստծո կանչին: Այդ պահից հետո Սամվելը սովորեց ուշադիր լինել Աստծո ձայնին, որ խոսում էր նրա հետ իր սրտում, և նա լավ առաջնորդ դարձավ իր ժողովրդի համար:

Այս տարիքում կարևոր է երեխայի լսողական ընդունակությունները զարգացումը: Իրենց կարճ ուշադրությունն աստիճանաբար վերաճում է՝ գրավելով արտաքին միջավայրից եկող ձայնային ու տեսողական ազդակները: Երբ երեխաները սովորում են ընտրողաբար լսել այդ պահի կարևոր բաները, մենք ուրախանում ենք և գովում իրենց զարգացող ընդունակության համար: Մենք այդ կարողությունն անվանում ենք ուշիմություն: Ուշիմությունն օգնում է երեխային սովորել: Հեղին էական դեր խաղաց և սովորեցրեց Սամվելին ուշադիր լինել իրեն կանչող ձայնին, որովհետև նա չանտեսեց Սամվելի կրկնվող հարցումները: Հեղին լսեց իր սրտի կանչը և լսեց Աստծուն, որ հորդորում էր նրան Սամվելին լսել սովորեցնել: Որպես ծնողներ և ուսուցիչներ՝ մենք նույնպես կոչված ենք մեր երեխաների մեջ զարգացնելու լսելու այդ շատ մարդկային կարողությունը: Լավ լսելու իրենց ընդունակության մեջ աճելիս երեխաները պիտի մեծանան Աստծո ձայնի նկատմամբ ուշիմությամբ: Ոչ ամեն երեխա պիտի ունենա Սամվելի նույն փորձառությունը: Ինչևէ, ինչպես Տերը պատգամում է մեզ, ծնողներին լսելը և ուշադիր լինելը սկիզբն է լսելու Աստծո ձայնը: Ուսուցիչներին ու ծնողներին լսելու կոնկրետ փորձառությունը և Աստծո խոսքին եկեղեցում կամ տանը երկյուղածությամբ հետևելը սկիզբն են ուշիմության՝ լսելու Աստծո ձայնը ամբողջ կյանքի ընթացքում, որ խոսում է մեր սրտերում՝ իբրև հիմք մեր հոգևոր կյանքի: Ահա մի քանի բաներ, որ կարող եք անել ձեր երեխաների հետ՝ նրանց մեջ ամրապնդելու լավ լսելու սովորությունը.

1. Ձեր երեխայի հետ միասին Աստվածաշնչից կարդացեք Ա Թագ. 3:1-11 հատվածը: Եթե երեխան իր հետ տուն է բերել դասագիրքը, հանձնարարեք նրան ընթերցելու այն ձեզ համար, իսկ դուք ուշադիր լսեք նրան: Կամ, կարելի է հանձնարարել նրան պատմելու դպրոցում իր լսած դասը և կամ ձեր ընթերցածն իր սեփական բառերով:
2. Միասին զրուցեք, թե ինչպես եք լսում մեկդ մյուսին: Արդյոք բոլորդ ուշադի՞ր եք միմյանց նկատմամբ: Անմիջապես արձագանքո՞ւմ եք մեկդ մյուսի կանչին կամ արդյոք զբաղվա՞ծ եք այլ գործերով: Կազմե՛ք լավ լսելու եղանակների մասին մի ցուցակ և ցանկագրե՛ք այն եղանակները, որոնցից պետք է խուսափել (անտեսել ծնողի կամ ուսուցչի խրատը կամ խորհուրդը, բամբասանքին ականջ կախել, և այլն): Յուրաքանչյուրդ ընտրե՛ք լավ լսելու մի եղանակ և բացահայտե՛ք լսելու այնպիսի սովորություն, որ ինքներդ կարիք ունեք զարգացնելու: Առաջիկա օրերին ու շաբաթներին ստուգեք ինքներդ ձեզ և տեսեք, թե ինչպես եք յուրաքանչյուրդ զարգացնում այդ սովորությունը:
3. Սովորություն դարձրեք, որպես ընտանիք, ամեն օր կարդալու մի հատված Աստվածաշնչից: Ընտանիքով միասին հավաքվելու հարմար ժամանակ հատկացրեք և այն դարձրեք Աստծո խոսքը լսելու ժամանակ: Հիշեցրեք ձեր երեխային, որ երբ եկեղեցում լսում ենք Ավետարանի ընթերցումը, սարկավագը բոլորին հորդորում է լսել երկյուղածությամբ և ուշադրությամբ: Նույնը կատարեք նաև տանը:
4. Սովորեցրե՛ք ձեր երեխային և հաճախ աղոթե՛ք հետևյալ տողերը Աստվածաշնչի Առակաց Գրքից.

«Լսի՛ր, որդյակ, հորդ խոսքը և մի՛ մերժիր մորդ պատվիրանները» /Առակներ 1.8/:

ԱՍՏՎԱԾ ՕԳՆՈՒՄ Է ԻՆՁ ՄԵԾԱՆԱԼ

«ՀԻՍՈՒՍ ԱՃՈՒՄ ԷՐ ԵՎ ԶՈՐԱՆՈՒՄ
ԼԻ ԻՄԱՍՏՈՒԹՅԱՄԲ»:

Ըստ Ղուկասի 2:40

Հայտնագործենք

Երբ ես ..... տարեկան էի,

1

սովորեցի քայլել:

2

սովորեցի խոսել:

3

սովորեցի գույները:

4

Հասակս
աճեց 9 0 սմ - ով:

Իմ անունն է

_____

5 Ես սովորեցի գրել իմ անունը:

Հիմա դու 6 տարեկան ես:

Նկարի՛ր մի բան, որ նոր սովորեցիր:

Մանուկ Հիսուսը մեծանում էր քեզ նման: Նա քեզ պես սովորում էր շատ բաներ: Լսի՛ր, երբ ուսուցիչը պատմի Հիսուսի մեծանալու մասին:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Հիսուսը մեծանում է

Ըստ Մատթեոսի 2:13-23 և Ղուկասի 2:39-40

Պատմության մեջ որոշ բառեր գրված են տառերի՝ աջից դեպի ձախ դասավորությամբ: Գրի՛ր դրանց ճիշտ ձևերը բառին հաջորդող գծիկների վրա: Ապա ուսուցչի հետ կարդա՛ պատմությունը:

նթերազան __ __ __ __ __ __ __ __ այն քաղաքն էր, որտեղ ապրում էր մանուկ Հիսուսը իր ծնողների՝ Հովսեփի և Մարիամի հետ: Հիսուսը մեծանում էր և սովորում շատ նոր բաներ: Նա արդեն կարողանում էր ինքնուրույն հագնել իր շորերը և ըրենկիշոկ __ __ __ __ __ __ __ __ __ : Նա մեծապես օգնում էր իր նսույի __ __ __ __ __ հորը՝ Հովսեփին: Իր ընկերների հետ նա գնդակ էր խաղում և սովորում նրանց հետ լեսիկ __ __ __ __ __ իր խաղալիքները:

Մարիամն աղոթքներ էր սովորեցնում նրան: Հիսուսը սիրում էր լեթողա __ __ __ __ __ __ իր ընտանիքի հետ ամեն ճաշ ուտելուց առաջ: Շաբաթ օրվա ընթրիքն ամենահատուկն էր, երբ Մարիամը վառում էր երկու ընոմ __ __ __ __ : Հիսուսի ամենասիրելի բանը ճերմակ շորի տակ ծածկված հացն էր: Հովսեփը, Մարիամը և Հիսուսն ամեն շաբաթ գնում էին ժողովարան՝ փառաբանելու Աստծուն: Հիսուսը սովորում էր կարդալ: Մի օր ժողովարանում նա կարդաց Հին Կտակարանի ընքերо __ __ __ __ __ __ :

Հոգևոր Բառարան

Ն ա զ ա ր ե թ

Քաղաք, որտեղ մեծացել է Հիսուսը:

ՎՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Երեխաները ծնվում են քիչ մազերով: Մեծանալիս նրանց մազերը նույնպես երկարում են: Մազերը կարող են լինել խուճուճ կամ ուղիղ, սև, շագանակագույն կամ շեկ: Մեր գլուխը ծածկող մազերը գեղեցիկ տեսք են տալիս մեզ: Ծնողները շատ են ուրախանում՝ տեսնելով իրենց երեխաների մեծանալը: Նրանք շնորհակալություն են հայտնում Աստծուն, ինչպես Մարիամը և Հովսեփը, երբ մանուկ Հիսուսին տարան տաճար:

Ահա Մարինեի ծնողները: Նրանք Մարինեին տանում են եկեղեցի, որպեսզի շնորհակալություն հայտնեն Աստծուն՝ նրան պարգևելու համար: Ծնողները խնդրում են, որ քահանան օրհնի նրան՝ մինչև առաջին անգամ նրա մազերի կտրելը: Մարինեն առաջ է գալիս և կանգնում խորանի առջև: Հենց որ քահանան Սուրբ Խաչով օրհնում է նրան, մի փոքր կտրում է նրա մազերից: Ծնողները պիտի պահեն այդ մազերը՝ որպես հիշատակ Մարինեի առաջին անգամ մազերը կտրելու:

Սա մանուկների մազերն առաջին անգամ կտրելու օրհնության աղոթքն է:

Գրի՛ր քո անունը դատարկ թողնված տեղում: Այնուհետև, պատկերի՛ր երեխայի դեմքը նկարի մեջ՝ քեզ նմանեցնելով:

Աղաչում ենք քեզ, Տեր Աստված Փրկիչ մեր, ինչպես Սելովում քահանայապետի ձեռքով օրհնեցիր մանուկ Սամվելին, նույնպես էլ հիմա օրհնի՛ր այս պատանուն_____ և Սուրբ Հոգիդ հաստատիր նրա մեջ, որպեսզի առողջ մեծանա և երկար կյանք ունենա՝ վայելելով քո բարիքները:

ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԸ ՍՈՎՈՐՈՒՄ Է ԿԱՐԴԱԼ

Սուրբ Վարդան Մամիկոնյանը քեզ նման մի մանուկ է եղել: Նրա մայրը՝ Սահականուշը, և հայրը՝ Համազասպը, շատ էին հպարտանում իրենց զավակով: Նրանք Վարդանին սովորեցնում էին հայոց այբուբենը և օգնում կարդալու Աստվածաշունչը:

Վարդանի ամենասիրելի ուսուցիչը իր մորական պապիկն էր՝ Սահակ կաթողիկոսը: Երբ նրանք միասին էին լինում, պապիկն օգնում էր նրան լավ կարդալ Աստվածաշունչը:

Ահա այն նախադասությունը, որը Վարդանը սիրում էր կարդալ իր պապիկի հետ:

Գունավորի՛ր ներկիր տառերի դատարկ մասը՝ նշված գույների համաձայն:

Աստված ՍԵՐ է:

ս = կարմիր ե = կանաչ ր = դեղին

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասին ձեր երեխան սովորեց, որ Հիսուս մեծացել է ճիշտ իր նման: Ակնհայտ է, որ մարդկային աճը սոսկ ֆիզիկական չէ, այլ ընդգրկում է մտավորը, զգացականը և հոգևորը: Չնայած Ավետարաններում չեն գրանցվել Հիսուսի կյանքի այս էական զարգացումները, սակայն Ղուկասի Ավետարանի 2:40 համարում նշված «աճում էր» կարճ միտքը հուշում է, որ Հիսուս ապրեց այն ամենը, ինչ յուրաքանչյուր երեխա ունենում է մեծանալիս: Իհարկե, այս իմանալով նրանք կգնահատեն իրենց աճման ամեն մի փոքրիկ քայլը և նրանց մեջ կմեծանա Աստծուն շնորհակալ լինելու զգացումը կյանքի պարգևի համար:

Նազարեթում Հիսուսի մանկության պատմության միջոցով նրանք իմացան, որ Մարիամը և Հովսեփը Հիսուսին սովորեցրին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նրան մեծանալիս: Սուրբ Վարդանի պատմության մեջ կրկնվում է նույն թեման: Մայրը՝ Սահականուշը և հայրը՝ Համազասպը, և պապը՝ Սահակ կաթողիկոսը սովորեցրին նրան սիրել Աստծուն և ինչպես կարդալ Աստվածաշունչը ու ապրել Տիրոջ պատվիրանների համաձայն: Երեխային դաստիարակելու սրբազան պարտականությունն իրագործելիս փոքր հասակից ծանոթացրեք նրան լսել և կարդալ Աստծո Խոսքը Սուրբ Գրքից: Քանի դեռ ձեր երեխան տակավին փոքր է ինքնուրույն Աստվածաշունչ կարդալու համար, այն կատարեք ինքներդ, որով կհեշտացնեք նրա գործը, երբ ինքը կկարողանա կարդալ: Ձեր երեխայի հետ կազմեք նրա կյանքի ժամանակացույցը՝ նշելով ամենակարևոր պահերը, երբ նա առաջինը սովորում է մի բան անել: Օգտագործեք վանդակավոր թուղթ 15 սմ լայնությամբ և գրանցե՛ք առաջարկվող հետևյալ պահերը. ծնունդը, խոսած առաջին բառը, առաջին քայլը, առաջին օրը դպրոցում, մկրտությունը, առաջին անգամ մազ կտրելը և այլն:

Ժամանակացույց ձեր երեխայի կյանքի հիշարժան պահերի մասին

Ձեր օգնությամբ թող նա գտնի, թե երբ են նշյալ իրադարձությունները տեղի ունեցել, կամ, եթե չեք հիշում ժամանակը, ապա իրադարձության մասին վերհուշ կատարեք: Ձեր երեխան գուցե նկարներ պատկերի յուրաքանչյուր իրադարձության կողքին:

_____
երեխայի անունը

ծնունդ	մկրտություն	առաջին բառը	առաջին քայլը	առաջին անգամ մազ կտրելը	առաջին օրը դպրոցում

ԳԼՈՒԽ Գ

ՎԱՅԵԼԵՆՔ ԱՅՍ ՀՐԱՇԱԼԻ ԱՇԽԱՐՀԸ

Աստծո աշխարհը լի է բազում հրաշքներով: Օվկիանոսները, ծովերն ու լեռները, հսկա կետերն ու փղերը, խոտակեր կենդանիներն ու միջատները, անձրևաբեր քամիները, դաշտերում ու այգիներում աճող բարիքները՝ այս ամենը մենք կարող ենք վայելել:

ԳԼՈՒԽ Գ

ՎԱՅԵԼԵՆՔ ԱՅՍ ՀՐԱՇԱԼԻ ԱՇԽԱՐՀԸ

Ծնողների համար

Այս գլուխն ընդգրկում է երեխաների սիրելի պատմությունները: Հին և Նոր Կտակարաններից քաղված հատընտիր պատմությունների միջոցով երեխաների ուշադրությունը հրավիրվում է արարչագործության հրաշալիքների վրա: Նոյյան տապանի պատմությունն առիթ է տալիս երեխաներին հիանալու Աստծո ստեղծած ամբողջ կենդանական աշխարհով, ինչպես նաև ջրհեղեղի դրամատիկ իրադարձությամբ: Կետի փորում հայտնված Հովնանի պատումը կենտրոնանում է Աստծո ստեղծած բազմաթիվ կենդանիներից մեկի վրա: Նոր Կտակարանի երկու պատմությունները կօգնեն երեխաներին գնահատելու եղանակային բնական երևույթները և սնվելու բարիքների պարգևը, որը նույնպես վայելում ենք մեր Արարչից:

ՆՈՅԸ ՓՐԿՎՈՒՄ Է ՋՐՀԵՂԵՂԻՑ

«ԾԻԱԾԱՆԸ ԿՀԻՇԵՑՆԻ ՁԵԶ, ՈՐ ԵՍ ՄԻՇՏ ՊԻՏԻ ԽՆԱՄԵՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ»:

Ըստ Ծննդոց 9:13

Հայտնագործենք

Ջուրն օգտագործվում է շատ լավ բաների համար: Երբեմն ջուրը կարող է նաև փորձանք պատճառել: Նայի՛ր յուրաքանչյուր նկարին: Ըստ պատկերվածի շրջագծի՛ր լավի կամ փորձանքի նշանները:

լավ ☺ փորձանք ☹

☺ ☹

☺ ☹

☺ ☹

☺ ☹

Լսի՛ր, թե ինչ պատահեց Նոյի և նրա ընտանիքի հետ, երբ շատ ուժեղ անձրև եկավ:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Նոյը փրկվում է մեծ ջրհեղեղից

Ըստ Ծննդոց 6:14- 7:3, 5-20; 8:1 –20, 9: 1-17

Կարդալու ընթացքում լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ օգտագործելով հուշող գույները:



Աստված ասաց Ն__ յին, որ տապան կառուցի:

Տերն ասաց. «Նոյ, շուտով ուժեղ անձրև պիտի գա և ջրհ__ ղ __ղ պիտի լինի:

Վերցրու քո ընտանիքը և մտիր տ__ պ__ն:

Քեզ հետ վերցրու երկրի վրա ապրող բոլոր կենդան__ներ__ց մեկ զույգ և բավարար ուտելիք բոլորիդ համար: Կենդանիները եկան զույգ առ զույգ:

Առաջինը եկան առյ__ծները, ապա վագրերը, արջերը և ընձ__ղտները, ոչխարներն ու այծերը, ճայերը, բադերն ու սագերը, գետաձիերն ու փղ__ ը:

Շատ ուժեղ անձրև եկավ քառաս__ն օր՝ գիշեր ու ցերեկ: Ջուրը ծածկեց ամեն ինչ: Տապանը լ__ողում էր ջրերի վրա: Նոյը, նրա ընտանիքը և կենդանիները ապահով ապրում էին տապանում: Անձրևը դադարեց, և տապանը իջավ Արարատ լեռ__ն վրա: Երբ ջուրը ցամաքեց, բոլորը դուրս եկան տապանից:

Կենդանիները դուրս ելան զույգեր__վ և տարածվեցին երկրով մեկ: Աստված օրհնեց Նոյին և նրա որդիներին. «Երջ__նիկ եղեք և շատ եր__խան__ր ու թոռներ ունեցեք»:

Աստված ամպերի մեջ ծ__ածան կապեց և ասաց. «Այս ծիածանը թող հիշեցնի ձեզ, որ ես միշտ պիտի խնամեմ իմ ժ__ղ__վրդին»:

Առաջին Հողագործը

Տապանից դուրս գալուց հետո Նոյը և նրա որդիները ցած իջան Արարատ լեռան ստորոտները: Նոյը խաղողի այգի տնկեց դաշտում, և խաղողը աճեց, հասունացավ: Այս պատճառով Հայաստանի խաղողը լավն է:

Երբ ուսուցիչը կարդա յուրաքանչյուր նախադասությունը, գծով միացրո՛ւ այն համապատասխանող նկարին:

Խաղողի հայրենիքը Արարատ լեռան բարեբեր դաշտավայրն է:

Արարատ լեռան ձյունը հալչում է, և ջուրը առվակներով հոսում է դեպի խաղողի այգիները:

Երկնքից շողացող արևը հասունացնում, քաղցրացնում և հյութեղ է դարձնում խաղողի ողկույզները:

ՎՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Խաղողները հասունանում են օգոստոսին: Մենք խաղողի առաջնահաս վազերը բերում ենք եկեղեցի՝ շնորհակալություն հայտնելու Աստծուն: Քահանան օրհնում է խաղողը և աղոթում.

«Օրհնի՛ր, Տե՛ր, այս խաղողի ողկույզները,
որ դրել ենք Քո առջև»:

«Օրհնի՛ր, Տե՛ր, խաղողը մշակողներին և
դրանց նվիրողներին»:

«Օրհնի՛ր, Տե՛ր, այս խաղողի որթատունկերը»:

Սուրբ Ներսես Շնորհալու աղոթքը
Խաղողի օրհնության առիթով

Օրհնված խաղողն այժմ պատրաստ է ուտելու համար:

Գունավորի՛ր խաղողը, ապա նկարի՛ր քո դեմքը՝ պատկերն ամբողջացնելու համար:

Հոգևոր Բառարան

Օ ր հ ն ե լ

Սրբագործել:

Գինին պատրաստվում է խաղողից

Նոյը գինի պատրաստեց իր աճեցրած խաղողի քաղցր հյութից:

Վերջին Ընթրիքի ժամանակ Հիսուսը վերցրեց գինու բաժակը: Նա շնորհակալություն հայտնեց Աստծուն և տվեց բաժակն իր ընկերներին և ասաց. «Վերցրե՛ք և խմե՛ք սրանից: Դա է իմ արյան բաժակը»:

Սուրբ Պատարագի ընթացքում գործածվող բաժակը կոչվում է սկիհ: Քահանան սկիհի մեջ լցված գինու մեջ թաթախում է նշխարհը՝ հաղորդության հացը: Երբ ստանում ենք Սուրբ Հաղորդություն, ճաշակում ենք քաղցր գինին, որը մեզ հիշեցնում է Հիսուսի զոհաբերության մասին:

Այս առարկաներն օգնում են մեզ հիշել, թե ինչ կատարեց Հիսուսը Վերջին Ընթրիքին:

Իրա՛ր միացրու կետերը: Ի՞նչ ես տեսնում:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Ձեր երեխան ծանոթացավ Նոյի և մեծ ջրհեղեղի պատմությանը (Ծննդոց 6:14- 7:3, 5-20; 8:1-20, 9: 1-17): Դրամատիկ իրադրության պատճառով ջրհեղեղի պատմությունը նախընտրելի է երեխաների համար: Վեց տարեկանի համար հետաքրքիր է երկու-երկու կենդանիների մտնելը տապան: Երկիրը ջրով հեղեղած անձրևի տարափը բավական ազդեցիկ է: Տապանի՝ լեռան կատարը բարձրանալը գրգռում է նրանց բնական զգացողությունը՝ դրամատիկ և անիրական թվալու պատճառով: Պատմության միջոցով երեխաների բնական փորձառությունը անձրևի հետ, նրա բարերար ու երբեմն կործանարար ուժն առավել զգալի է դառնում: Դասում շեշտվում են Աստծո հոգատարությունը և սերը Նոյի հանդեպ, նրա ընտանիքին և կենդանիներին ջրհեղեղից փրկելու մեջ, որի պատճառը երկարատև անձրևները եղան:

Ձեր ընտանիքում գուցե շարունակեք զարգացնել մեր հանդեպ Աստծո ունեցած հոգատարության և սիրո թեման, որով կօգնեք ձեր երեխային նշմարել Աստծո արարչագործության հրաշքներն իր շրջապատում: Օգնեք նրանց նկատել, որ հանդարտ անձրևները ջրում են դաշտերը, իսկ տեղատարափ անձրևները վնաս հասցնում: Դրա միջոցով երևում է Աստծո սիրառատ խնամքը, քանզի բնությունն ինքն իրեն նորոգվում է, և Աստված վերականգնում է վնասները, որ գոյատևենք:

Աստծո խնամքի մի լավ օրինակ է տրված մեզ, երբ Նոյը խաղող տնկեց և դարձավ առաջին հողագործը: Իհարկե, երեխաները պետք է իմանան իրենց ուտելու մրգերի, բանջարեղենի և հացի առատության մասին: Եկեղեցին օրհնում է առաջին միրգը՝ ի նշան Աստծո օրհնության երկրի աճեցրած բարիքի վրա: Օգոստոս ամսին, երբ Հայաստանում սկսում է հասունանալ խաղողը, Եկեղեցին օրհնում է խաղողի առաջին ողկույզները Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնի օրը: Ըստ սովորության, հավատացյալները չպիտի խաղող համտեսեն մինչև դրանք չօրհնվեն: Ձեր ընտանիքով որոշեք խաղող չուտել, մինչև որ տոնի օրը չգնաք եկեղեցի և ձեր երեխաների հետ օրհնված խաղող չվերցնեք: Եթե ինքներդ աճեցրել եք խաղող, ապա մի քանի ողկույզ ձեր երեխաների հետ տարեք եկեղեցի, որպեսզի քահանան օրհնի:

ՀՈՎՆԱՆԸ ԿԵՏԻ ՓՈՐՈՒՄ

«ԴՈՒ ԳԹԱՍԻՐՏ ԵՍ ՈՒ ՈՂՈՐՄԱԾ, ՀԱՄԲԵՐՈՂ ԵՍ ՈՒ ԲԱԶՈՒՄՈՂՈՐՄ»:

Ըստ Հովնանի 4:2բ

Հայտնագործենք

Աստված ստեղծեց բազմատեսակ արարածներ: Որոշներ քայլում են ցամաքի վրա, որոշներ թռչում երկնքում և որոշներ էլ լողում օվկիանոսներում ու ծովերում: Շրջագծի՛ր այն բառը, որը ցույց կտա յուրաքանչյուր կենդանու ապրելու տեղը:

ցուր հող օդ

ցուր հող օդ

ցուր հող օդ

ցուր հող օդ

ցուր հող օդ

ցուր հող օդ



Աստվածաշնչի այսօրվա դասը պատմում է մեծ ձկան մասին, որը կոչվում է կետ:

Ուշադի՛ր լսիր Աստվածաշնչի պատմությունը կետին կուլ գնացող մարդու մասին, որպեսզի պարզ դառնա նկարում պատկերվածը:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Հովնանը կետի փորուխ

Ըստ Հովնանի 1-4

Ուժեղ քամին փչեց ու խառնեց այս պատմության քարտերը: Միայն քչերը մնացին իրենց տեղում: Սկսի՛ր թիվ 1-ից և ճիշտ հերթականությամբ համարակալի՛ր պատմության քարտերը:

Աստված ասաց Հովնանին, որ գնա Նինվեացիների մոտ և ասի. «Տերը դժգոհ է ձեր պահվածքից: Փոխե՛ք ձեր ապրելակերպը, թե չէ կպատժվեք»:

1

Երբ նավաստիները պարզեցին, որ փոթորիկը Հովնանի մեղքով է, կատարեցին Հովնանի խնդրանքը և նրան ծովը գցեցին:

Կետի փորում գտնվելու ժամանակ Հովնանը աղոթեց Աստծուն:

5

Հովնանը վախեցավ գնալ Նինվե: Նա նավով փախավ Տիրոջ մոտից: Բայց Տերը ուժեղ փոթորիկ բարձրացրեց ծովում:

Հենց այդ պահին փոթորիկը դադարեց: Տերը կետին հրամայեց, որ Հովնանին կուլ տա: Հովնանը կետի փորում մնաց երեք օր ու գիշեր:

4

Նինվեի թագավորը և ժողովուրդը հավատացին նրան և փոխվեցին: Աստված ուրախացավ: Նա խղճաց և չկործանեց նրանց:

Աստված լսեց նրա աղոթքը և հրամայեց կետին ցամաք նետելու Հովնանին:

Երկրորդ անգամ Տերն ասաց Հովնանին գնալու Նինվե և փոխանցելու իր պատգամը:

Արդյոք ես նմա՞ն եմ Հովնանին

Մտածի՛ր այն մասին, երբ մայրդ կամ հայրդ քեզ խնդրել էր մի բան անել և դու չես ցանկացել այն կատարել: Ի՞նչ տեղի ունեցավ: Ինչպե՞ս մերժեցիր անել նրանց ասածը: Մի նկար պատկերիր՝ այն ցույց տալու համար:

Երբ երեխաները չեն հնազանդվում, ծնողներն օգնում են նրանց շտկել իրենց պահվածքը: Կարդա ներքևի ցանկից և X նշան դիր այն նախադասության առջև, թե ինչ կանեն ծնողները երեխաների անհնազանդության դեպքում:

__ կզրկեն սիրված խաղալիքներից

__ քաղցրավենիք կտան

__ կկրճատեն խաղալու ժամանակը

__ կպատժեն որոշ ժամանակ մենակ մնալու սենյակում

__ կտանեն տիկնիկային թատրոն

Երբ մենք մենակ ենք և հանգիստ, կարող ենք մտածել

Հովնանը մնաց կետի փորում երեք օր ու գիշեր: Նա մեն-մենակ էր և շատ էր վախենում: Նա խելոք նստած ինքն իրեն մտածում էր: Հովնանը զղջաց իր արածի համար: Նա սկսեց խոսել Աստծո հետ և աղոթել:

Գունավորի՛ր նկարները և կարդա՛ Հովնանի աղոթքը ուսուցչի օգնությամբ: Այնուհետև ընտրի՛ր ձախ կողմի բառերից, որը ցույց կտա քո զղջումը, և գրի՛ր այդ բառը գծի վրա՝ իբրև աղոթք:

Իմ նեղության մեջ ես
աղոթեցի իմ Տեր Աստծուն,
և նա լսեց իմ աղաչանքը ...

... մտաբերեցի Տիրոջը,
և նա լսեց իմ աղոթքը:

Չեմ կարող գալ

Ներողություն

Զբաղված եմ

_____

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Աստված ներում է ինձ

Երբ վիրավորում ենք ուրիշներին մեր խոսքով ու վարվեցողությամբ, կամ երբ չենք հնազանդվում մեր ծնողներին և ուսուցիչներին, մենք նաև վիրավորում ենք Աստծուն: Մենք պետք է ներողություն խնդրենք նրանցից, ինչպես նաև հայցենք Աստծո ներողամտությունը:

Մենք ծնկի ենք գալիս քահանայի առջև և խոստովանում մեր ասած վիրավորական խոսքերը կամ գործած վատ արարքները:

1 Մեղա Աստծո:

Մենք խնդրում ենք քահանային, որ աղոթի Աստծուն և արձակի մեր մեղքերը:

2 Աղոթիր ինձ համար:

Քահանան օրհնում է ինձ և մեղքերի թողություն տալիս Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

3 Թող Աստված թողություն շնորհի քեզ:

Հոգևոր Բառարան

Մ ե ղ ք

Վատ արարք:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այսօրվա դասը ձեր երեխայի ուշադրությունը հրավիրում է գնահատելու Աստծո հրաշալի արարածներից ծովաբնակ կետին: Կետի փորում հայտնված Հովնանի պատմությունը շատ սիրված է երեխաների կողմից: Նրանք ծանոթանում են հնազանդության մասին իրենց դասին, որը Հովնանը սովորեց կետի փորում: Աստվածաշնչում բացեք Հովնանի գիրքը և այդ կարճ մարգարեության տեքստին հետևելով թույլ տվեք, որ ձեր երեխան վերապատմի պատմությունը: Ուշադրություն դարձրեք Հովնանի աղոթքին և այն կարդացեք ձեր երեխային:

Ծնողների ու հոգատար խնամողների նկատմամբ երեխայի հնազանդվելու պատասխանատվությունը մեծացնելու համար կարելի է մի խաղ կազմակերպել, որում Հովնանը կօգնի նրանց լսող լինել ծնողների խնդրանքներին: Թող ձեր երեխաներն իմանան, որ ամեն անգամ, երբ նրանք դանդաղում են ձեզ լսելուց կամ թաքնվում են շրջանցելով ձեր ասածները, պիտի կանչեք Հովնանի անունը՝ նրանք պիտի հիշեն, թե ինչ տեղի կունենա, երբ մեկը փորձի անտեսել Աստծո հրամանը: Լիահույս ենք, որ նրանք կմեծանան և լսող կդառնան ձեր ասածներին: Սա կլինի սկիզբը՝ Աստծո կամքին անսալու և այն կատարելու գործում: Նույն կերպով մենք, որպես ծնողներ, պետք է հիշենք այսօրվա Հիշարժան Տողը և համբերատար լինենք մեր երեխաների նկատմամբ. «Դու գթասիրտ ես ու ողորմած, համբերող ես ու բազումողորմ» /ըստ Հովնանի 4:2բ/:

ԴԱՍ 11

ՀԻՍՈՒՍԸ ԽԱՂԱՂԵՑՆՈՒՄ Է ՓՈԹՈՐԻԿԸ

**«ԴՈՒ ՆԵՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԷԻՐ ԵՎ ՏԵՐԸ ՓՐԿԵՑ ՔԵԶ:
ՆԱ ԴԱԴԱՐԵՑՐԵՑ ՓՈԹՈՐԻԿԸ ԵՎ ԾՈՎԻՆ ԽԱՂԱՂԵՑՐԵՑ»:**

Սաղմոս 106:28-29

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Կարդա՛ և խոսի՛ր այս նկարի պատմության մասին:

Արայենց ընտանիքն ընկերների հետ դուրս են գնում պտույտի: Ի՞նչ են անում տղաները նավակում:

Այս նկարի մեջ ո՞րն է տարբերությունը երկնքի և ջրի միջև: Ի՞նչ տեսք ունի Արայի դեմքը: Ընդգծի՛ր այն բառը, որը կնկարագրեր նրա զգացողությունը:

զարմացած վախեցած ուրախ

Հայրը և մայրը գալիս են և բռնում իրենց զավակների ձեռքից: Արան և նրա քույրերն այլևս չեն վախենում:

Դու երբևէ նստե՞լ ես նավակ: Դու երբևէ եղե՞լ ես նավակում ալեկոծության և ուժգին քամու ժամանակ:

Շրջանակի մեջ նկարիր քո դեմքը՝ ցույց տալով, թե ինչ կզգայիր, եթե ալեկոծության ժամանակ գտնվեիր նավակում:

Աստվածաշնչի մեր այսօրվա պատմության մեջ մենք պիտի տեսնենք, թե ինչ զգացին Հիսուսի ընկերները, երբ իրենց նավակը մեծ ալեկոծության մեջ հայտնվեց:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Հիսուսը խաղաղեցնում է փոթորիկը

Ըստ Մարկոսի 4:35-41

Ուսուցչի հետ կարդա՛ պատմությունը, ապա գունավո՛ր ներկիր նկարները:

Հիսուսը սովորեցնում էր մարդկանց, ովքեր Գալիլիայի ծովեզերք էին եկել նրան լսելու համար: Երեկոյան Հիսուսը և նրա աշակերտները նստեցին նավակը, որպեսզի անցնեն ծովի մյուս կողմը:

Հանկարծ մեծ փոթորիկ սկսվեց: Քամին փչում էր և սուլում: Ալիքները գնալով մեծանում էին և բարձրանում: Նավակը այս ու այն կողմ էր քշվում: Ջուրը լցվում էր փոքրիկ նավակի մեջ:

Պետրոսը և մյուս աշակերտները փորձում էին դատարկել ջուրը, բայց այն ավելի էր լցվում: Նրանք վախենում էին, որ նավակը մեջտեղից կկիսվի:

Հովհաննեսը նայեց նավակի ետնամասը և տեսավ, որ Հիսուսը հանգիստ ննջում է փափուկ բարձի վրա. «Վարդապե՛տ, վարդապե՛տ, վե՛ր կաց», – ասաց Պետրոսը: «Հոգ չէ՞, որ մենք կարող ենք խեղդվել», – բացականչեց Անդրեասը:

Հիսուսն արթնացավ, հանդարտ նայեց նրանց և կանգնեց նավակի մեջ: Նա սաստեց քամուն և ծովին ասաց. «Խաղաղվի՛ր, դադա՛ր առ»:

Քամին միանգամից դադարեց և ծովը հանդարտվեց կրկին: Ապա նա խոսեց իր առաքյալների հետ և ասաց. «Ինչու՞ եք այսքան վախեցած, ու՞ր է ձեր հավատը»:

Աշակերտները ակնածանքով նայեցին Հիսուսին և միմյանց հարցրեցին. «Ո՞վ է այս Հիսուսը, որ նույնիսկ քամին և ծովը հնազանդվում են նրան»:

ՎՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Դու հիշո՞ւմ ես մի պահ քո կյանքում, երբ շատ վախեցած էիր: Ի՞նչը վախեցրեց քեզ:

Շրջանակի մեջ պատկերի՛ր այդ իրավիճակը:

Հիսուսն օգնեց իր աշակերտներին, երբ նրանք նեղության մեջ էին: Նա խաղաղեցրեց ծովը: Մենք հավատում ենք, որ Հիսուսը մեզ նույնպես պիտի օգնի: Երբ վախենում ենք կամ նեղության մեջ ենք, կարող ենք աղոթել Հիսուսին՝ խնդրելով նրա օգնությունը:

Աղոթի՛ր այսպես.

Փակի՛ր աչքերդ և դանդաղ շունչ քաշիր:

1. Շո՛ւնչ քաշիր. 1, 2, 3, 4, 5, 6

2. Արտաշնչի՛ր և ասա՛. «Տեր Հիսուս»

3. Շո՛ւնչ քաշիր. 1, 2, 3, 4, 5, 6

4. Արտաշնչի՛ր և ասա՛. «Օգնի՛ր ինձ»:

/Կրկնի՛ր 3 կամ 4 անգամ/

Ի՞մ մկրտության խաչը

Քրիստոնյաները սովորաբար խաչ են կրում իրենց վզին, որը հիշեցնում է, թե Հիսուս միշտ իրենց հետ է: Մկրտության ժամանակ քահանան օրհնում է հատուկ խաչ քեզ համար, այն ամրացնում միահյուսված սպիտակ և կարմիր թելերով, որը կոչվում է «նարոտ»:

Լսի՛ր ուսուցչի երգած օրորոցայինը, որը ծնողներդ հավանաբար երգել են քեզ համար, երբ փոքրիկ բալիկ էիր: Ի՞նչ են ասում այս բառերը խաչի մասին:

Օրոր

«Ոսկէ խաչ վզիդ,
Քեզի պահապան,
Նարօտ կապել է
Ծերէն քահանան»:

Ռաֆայել Պատկանյան

Հոգևոր Բառարան

Ն ա ր ո տ

Մկրտության խաչի պարան՝ հյուսված կարմիր և սպիտակ թելերից:

ՂԵՎՈՆԴ ԵՐԵՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդը տագնապի մեջ էր: Հարևան պարսիկները ուրախ չէին, որ հայերը պաշտում են Հիսուս Քրիստոսին: Նրանք փորձեցին հայերին ստիպել երկրպագելու կուռքերին, որի հետևանքով պատերազմ սկսվեց:

Հայերը սիրում էին Հիսուսին: Հայերի առաջնորդ Վարդան Մամիկոնյանը գիտեր Հիսուսի աշխարհ գալու և բոլոր մարդկանց փրկելու մասին: Նա չէր վախենում պարսիկների թագավորի բանակից:

Պատերազմից առաջ Վարդան զորավարը խնդրեց Ղևոնդ Երեցին, որպեսզի աղոթք անի զինվորների հետ: Տեր Ղևոնդը նրանց նաև Սուրբ Հաղորդություն տվեց: Նա մնաց ճակատամարտի դաշտում՝ ձեռքին բարձր պահելով մեծ խաչը, որպեսզի զինվորները տեսնեն: Ամեն անգամ, երբ զինվորները տեսնում էին խաչը, գիտեին, որ Հիսուսն իրենց հետ է: Նրանք այլևս չէին վախենում:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Հիսուսի այս շատ համառոտ հրաշքը ընտրվել է մեր այսօրվա դասի համար, որպեսզի առիթ տրվի երեխաներին հիանալու Աստծո ստեղծած բնության հրաշքներով: Որպես մի ընտանիք՝ կարդացե՛ք Մարկոսի Ավետարանի 4:35-41 հատվածը: Երեխաներին հանձնարարեք նկարել ավետարանական պատմությունը կամ դերակատարմամբ այն ներկայացնել:

Այնքան հիասքանչ, որքան ծովի փոթորիկը կամ որևէ այլ բնական տարերք նաև երկյուղ է ներշնչում մեզ: Մանուկներն անմիջապես անձնատուր են լինում վախին, երբ իրենց շրջապատում հանդիպում են ուժգին երևույթների: Հիսուսի առաքյալները սարսափահար էին եղել Գալիլիայի ծովում հանկարծակի բարձրացած փոթորկից: Անպաշտպան մնալով փոքրիկ նավակում՝ նրանք վախեցել էին: Հիսուսի խաղաղ ներկայությունը սկզբում ապշեցրեց նրանց: Երբ ականատես եղան ծովում Հիսուսի հրամանով կատարված խաղաղությանը, նրանք լցվեցին երկյուղով: Այս փորձառությունն ավելիով ամրապնդում է նրանց աճող հավատն առ Քրիստոս Փրկիչը:

- Ընտանիքով զրուցեք ձեր վախ զգացած պահերի մասին: Թող յուրաքանչյուրը պատմի, թե ինչը փարատեց իր վախը:
- Ձեր զավակին սովորեցրեք Սուրբ Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ»-ի պահպանության հետևյալ աղոթքը: Աղոթե՛ք նրա հետ դպրոց գնալուց, անկողին մտնելուց առաջ կամ որևէ պահի, երբ նրանք կարիք ունեն պահպանության:
  «Բոլորի պահապան Քրիստոս, թող Քո Աջը հովանի լինի ինձ գիշեր ու ցերեկ, տանը մնալիս, ճամփա գնալիս, քնած, թե արթուն, որպեսզի երբեք չտկարանամ, և ողորմի՛ր Քո արարածներին, և ինձ՝ բազմամեղիս»:
- Հետևե՛ք, որպեսզի ձեր երեխան միշտ իր պարանոցին կրի քահանայի կողմից օրհնված խաչը: Սովորեցրեք նրան համբուրելու խաչը, հատկապես երբ նրանք վախեցած են՝ հիշեցնելու համար Հիսուս Քրիստոսի ներկայությունը:

ՀԻՍՈՒՍԸ ԿԵՐԱԿՐՈՒՄ Է ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

«ՀԻՍՈՒՍՆ ԱՍԱՑ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ. «ԵԿԵ՛Ք, ՃԱՇԵՑԵ՛Ք»:

Ըստ Հովհաննեսի 21:12

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Կերակուր ուտելը հաճելի է դառնում, երբ մանավանդ սոված ես լինում: Մենք նախաճաշում ենք առավոտյան, ճաշում կեսօրին և ընթրում երեկոյան: Այս պատկերը ☺ գծի՛ր այն ճաշի կողքին, որն ամենաշատն ես սիրում:

նախաճաշ **ճաշ** **ընթրիք**

Շրջագծի՛ր այն ուտելիքը, որը կցանկանայիր ուտել այս ճաշին:

Տոն օրերին կամ ամառային խնջույքներին մենք ճաշում ենք մեր հարազատների և ընկերների հետ: Սա հաճելի ճաշ է: Հիշո՞ւմ ես մի առիթ, երբ ճաշել ես ընկերներիդ հետ: Ո՞վ էր քեզ հրավիրել:

Նկարի՛ր ինքդ քեզ ընկերներիդ հետ ճաշելիս:

Հիսուսը շատ անգամներ ճաշի հրավիրեց իր ընկերներին: Պարզի՛ր, թե որտեղ նրանք ճաշեցին այս պատմության մեջ:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Հիսուսը կերակրում է իր ընկերներին

Ըստ Մատթեոսի 12:1-3 և Հովհաննեսի 21:1-17

Կարդալու ընթացքում լրացրո՛ւ բաց թողնված տառերը՝ օգտագործելով հուշող գունավոր նշանները:

ա ե ի ո ու

Երբ Հիս__սը և նրա աշակերտներն անցնում էին ցորենի արտերի միջով, աշակերտները քաղցած էին և սկսեցին պոկել ցորենի հասկերը և ուտել: Մի քանի փարիսեցիներ տեսան նրանց և ասացին Հիսուսին. «Ինչո՞ւ ես թույլ տալիս, որ քո աշակերտները ցորեն քաղեն և ուտ__ն շաբաթ օրով. չէ՞ որ օրենքին հակառակ է շաբաթ օրով գործ անելը»: Հիսուսը նրանց պատասխանեց. «Չէ՞ք տեսնում, որ նրանք ք__ղց__ծ են: Թող ուտեն: Աստված ցանկանում է, որ մենք բարություն անենք և կերակրենք նրան, ով քաղցած է: Երբ նրանք ինձ հետ են, կարող են ուտել»:

Մեկ ուրիշ օր աշակերտները ծովեզերքում սպասում էին Վարդապետ__ն: Նրանք որոշել էին ձուկ __ռսալ: Ամբողջ գիշեր ոչ մի ձուկ չէին բռնել: Երբ արևը ծագեց, Հակոբոսը լսեց մեկի ձայնը, որ կանչում էր. «Տղանե՛ր, ուտելու ձ__կ չունե՞ք»: Նրանք պատասխանեցին. «Ո՛չ, ոչ մի հատ»: «Ուռկանը գցեք նավի աջ կողմը և կգտնեք», - ասաց նա ծովեզերքից: Նրանք մի անգամ էլ գցեցին: Երբ սկսեցին դուրս քաշել պարանները, շատ զարմացան: «Ձկնե՛ր», - բացականչեց Պետրոսը, «Ձկներ», - բացականչեց Հովհաննեսը, - «Դա Հ__սուսը պետք է եղած լիներ ծովափում»:

Երբ հասան ծովափ, նրանք տեսան վառված ածուխի կրակատեղ և մի ձուկ նրա վրա: «Այստեղ բերեք ձեր բռնած ձկներից և դրեք կրակի վրա: Գիտեմ, որ սոված կլինեք: Եկեք միասին ճաշ__նք», - ժպտալով ասաց Հիսուսը: Նրանք նստեցին կրակի շուրջ: Հիսուսը նրանց ձուկ և հ__ց տվեց: Երբ կերան, կշտացան, Հիսուս խոսեց Պետրոսի ու մյուսների հետ և ասաց. «Կերակրե՛ք իմ բոլոր __չխարներին ու գառներին»:

ՎՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հիսուսն իր ընկերներին խոստացավ, որ ինքը միշտ նրանց հետ պիտի լինի: Նա ուզում էր, որ աշակերտները հիշեն, թե ինչպես ինքը կերակրեց նրանց, երբ քաղցած էին:

Վերջին Ընթրիքին Հիսուսը սեղանից վերցրեց հացը, գոհություն հայտնեց և փառք տվեց Աստծուն, կիսեց, տվեց իր ընկերներին և ասաց. «Վերցրեք այս հացը և կերեք, սա իմ մարմինն է»:

Ապա վերցրեց բաժակով գինին, օրհնեց, գոհություն հայտնեց Աստծուն և տվեց իր ընկերներին՝ ասելով. «Վերցրե՛ք այս բաժակը և խմե՛ք դրանից: Սա՛ է իմ արյունը»: Հիսուսը պատվիրեց իր ընկերներին, որ միշտ կատարեն այս հատուկ ճաշը:

Սուրբ և Անմահ Պատարագ մատուցվում է ամեն կիրակի:

Պատարագ մատուցվում է նաև տոնական և սրբերի հիշատակին նվիրված օրերին:

Քահանան օրհնում է հացը և գինին՝ ինչպես Հիսուսը կատարեց:

Երբ հաղորդություն ենք ստանում, ընդունում ենք Հիսուսին՝ օրհնված

հացի **և** **գինու**

միջոցով, և գիտենք, որ Տերը մեզ հետ է:

Հոգևոր Բառարան

Սուրբ Պատարագ

Եկեղեցական արարողություն՝ ի հիշատակ Հիսուսի Վերջին Ընթրիքի:

Մենք շնորհակալ ենք Աստծուց՝ մեզ կերակրելու համար

Աստված տալիս է մեզ ուտելու այնքան շատ բարիքներ: Նա օգնում է մեզ վայելել այդ ամենը:

Յուրաքանչյուրը գծով միացրեք համապատասխանող նկարին:

Հողագործն աճեցնում է

Հայրիկը և մայրիկը

Ես, _____

Ուտելուց հետո Աստծուն շնորհակալություն ենք հայտնում հետևյալ աղոթքով.

«Փառք տիեզերքի Կերակրողին, որ մեզ կերակրեց և կշտացրեց, Նրան փառք հավիտյանս. ամեն»:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասի համար ընտրված հատվածները վերաբերում են ուտելիքներին: Երկու դեպքում էլ Հիսուսը ճանաչում է իր աշակերտների ուտելու և սնվելու կարիքը և բավարարում նրանց:

Երեխաներին շատ ծանոթ է քաղցի և կերակրվելուց բավականություն ստանալու զգացումը: Նրանք հատկապես վայելում են ճաշելը ուրիշ երեխաների հետ: Այսօրվա պատմվածքները տալիս են մեզ հրաշալի օրինակներ Հիսուսի՝ իր աշակերտների կերակուրի կարիքի նկատմամբ դրսևորած ուշադրության մասին: Երեխաները կարող են հեշտությամբ պատկերացնել միասին ուտելու աշակերտների ուրախությունը, երբ նրանք դրսում, ցորենի արտերի միջով քայլելիս գնում էին տաճար: Ծովեզերքում ճաշի տեսարանը նրանց պատկերում է այն հոգատարությունը, որը Հիսուսը ցուցաբերում էր իր քաղցած աշակերտների համար ճաշ պատրաստելիս:

Հիսուսի շարունակ խնամատարությունը և ներկայությունն արտահայտվում է Սուրբ Պատարագի միջոցով: Այս դասին երեխաները նաև ծանոթացան այն մտքին, որ Պատարագի միջոցով Հիսուս Քրիստոս կերակրում և սնում է մեզ: Պատարագի հացը և գինին Հիսուսի հավիտենական ներկայության նշաններն են հավատացյալների համար:

1. Կարդացեք Հովհաննեսի Ավետարանի 21:1-17 հատվածը, երբ ձեր երեխան դերակատարի Գալիլիայի ծովեզերքի տեսարանը: Հանձնարարեք նրան պատմել այն առիթների մասին, երբ շատ վայելել է հենց այդպիսի ճաշ:
2. Յուրաքանչյուր ճաշից հետո միասին աղոթեք այս դասին սովորած աղոթքը՝ օգնելով նրան ցույց տալու իրենց շնորհակալությունը Աստծուց:
3. Հիսուսը պատվիրեց Պետրոսին և մյուս աշակերտներին կերակրել իր «ոչխարներին»՝ իր սեփական ժողովրդին: Որպես Հիսուս Քրիստոսի հետևորդ՝ օգնիր քո երեխային ծրագիր մշակել, որով նա կկարողանա կիսել ուտելիքը քաղցած մարդկանց հետ: Սնունդը չփչացնելը կարող է լինել մի այլ միջոց՝ ուրիշների հետ այն կիսելու համար:
4. Ձեր երեխայի հետ կանոնավոր կերպով մասնակցեք Պատարագի սրբազան արարողություններին և միասին, որպես ընտանիք, ստացեք Սուրբ Հաղորդություն:

ԳԼՈՒԽ Դ

Աստված ստեղծեց ընտանիքները

Աստված մեզ տվել է ընտանիք սիրելու համար: Հայրիկը և մայրիկը խնամում և պաշտպանում են մեզ: Եղբայրները և քույրերը ուրախություն են, որոնց հետ մենք խաղում ենք: Մենք պատկանում ենք մեր ընտանիքներին:

ԳԼՈՒԽ Դ

Աստված ստեղծեց ընտանիքները

Ծնողների համար

Երեխայի անդամակցությունն ընտանիքում համայնքի առաջին և ամենակարևոր փորձառությունն է: Աստվածաշնչային առաջին ընտանիքին նայելիս երեխաները սովորում են գնահատել նմանություններն ու տարբերությունները հարազատների միջև: Աբրահամի և Սառայի որդի Իսահակի ծննդյան պատմության միջոցով նրանք սովորում են, թե ինչպես են երեխաներն ուրախություն բերում ծնողներին: Նրանք դառնում են որպես որդիներ և դուստրեր, ովքեր ուրախացնում են իրենց ծնողներին, ինչպես Զաքարիայի և Եղիսաբեթի տոնախմբությունն իրենց որդու ծննդյան առիթով: Ի վերջո, նրանք սովորում են գնահատել հայրերին ու մայրերին, ինչպես արդեն ծանոթացան Հովսեփի պատմությանը, ով դարձավ Հիսուսի երկրավոր հայրը:

ԱՌԱՋԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ

**«ԱՍՏՎԱԾ ՕՐՀՆԵՑ ԱԴԱՄԻՆ ՈՒ ԵՎԱՅԻՆ ԵՎ ԱՍԱՑ.
«ԱՃԵՑԵ՛Ք, ԲԱԶՄԱՑԵ՛Ք ԵՎ ԼՑՐԵՔ ԵՐԿԻՐԸ»:**

Ըստ Ծննդոց 1:28

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Յուրաքանչյուրս պատկանում է մի ընտանիքի: Ընտանիքները լինում են մեծ կամ փոքր: Որոշ ընտանիքներ բաղկացած են հորից, մորից և երեխաներից: Կան նաև ընտանիքներ, որում կան պապիկ ու տատիկ: Որոշ ընտանիքներում էլ մորաքույրերն ու քեռիներն են հոգ տանում երեխաներին: Ինչպիսի ընտանիքում էլ ապրես, մեկ բան հաստատ է, որ դու պատկանում ես քո ընտանիքին:

Ներքևում նկարի՛ր ինքդ քեզ և քո ընտանիքի անդամներին:

Ահա ընտանիքին վերաբերող որոշ բառեր, որոնք գրված են տառերի՝ աջից ձախ կարդալու կարգով: Ճի՛շտ գրիր դրանք: Շրջագծի՛ր այն բառը, որը քեզ է վերաբերում:

ոյուք	_ _ _ _	**ոյահ**	_ _ _ _
ոյաբղե	_ _ _ _ _ _	**ոյամ**	_ _ _ _
իդրո	_ _ _ _	**ոտսուդ**	_ _ _ _ _

Պարզի՛ր ընտանիքի անդամների անունները:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Աստծո առաջին ընտանիքը

Ըստ Ծննդոց 1-3, 4:1-7,17,5:1-4

Աշխարհի վրա ամեն ինչ ստեղծելուց հետո Աստված ստեղծեց Ադամին ու Եվային: Նրանց ստեղծեց իր նմանությամբ: Աստված օրհնեց Ադամին ու Եվային և տվեց նրանց շատ բարիքներ՝ երջանիկ ապրելու համար:

Աստված կամեցավ, որ Ադամն ու Եվան ընտրելու ազատություն ունենան: Տերը նրանց տվեց միայն մեկ պատվիրան, որ դրան հնազանդվեն: Նա ասաց.

«Դուք կարող եք ուտել պարտեզի բոլոր պտուղներից, բացի այն ծառի պտղից, որ աճում է պարտեզի կենտրոնում»:

Մի օր Ադամը և Եվան սխալ ընտրություն կատարեցին և չհնազանդվեցին պատվիրանին: Աստված դա չէր ցանկանում: Ադամն ու Եվան այսուհետև պիտի չապրեին Աստծո մոտ: Նրանք պետք է շատ աշխատեին, որպեսզի իրենց հացը վաստակեն:

Ադամն ու Եվան ունեցան շատ երեխաներ՝ տղաներ և աղջիկներ: Նախ ծնվեց Կայենը: Ապա Եվան ունեցավ մյուս որդուն՝ Աբելին: Կայենը և Աբելն ունեցան շատ եղբայրներ ու քույրեր: Եվ նրանց բոլորի ծնողներն էին Ադամը և Եվան:

Կայենը մեծանալով դարձավ լավ հողագործ: Նա աճեցնում էր բոլոր տեսակի բարիքները: Իր եղբայր Աբելը տարբերվում էր Կայենից: Նա սիրում էր այծեր ու ոչխարներ արածեցնել: Նա լավ էր պահում իր կենդանիներին:

Մի օր Կայենն իր աճեցրած բերքից ընծա մատուցեց Աստծուն: Աստված գոհ մնաց Կայենի նվերից: Նրա եղբայր Աբելն Աստծուն նվիրեց իր պահած լավագույն գառներից ու այծերից: Աստված ավելի հավանեց Աբելի ընծան:

Կայենը շատ զայրացավ: Նա նախանձեց իր եղբորը: Աստված ասաց Կայենին. «Ինչո՞ւ ես տրտմել. չէ՞ որ քեզ էլ եմ նույն չափ սիրում»:

Գրի՛ր առաջին ընտանիքի անդամների անունները՝

հայր	**մայր**	**եղբայր**	**եղբայր**
_ _ _ _	_ _ _	_ _ _ _ _	_ _ _ _

Մենք սիրված ենք

Ընտանիքները շատ լավ բաներ են անում միասին: Ծնողները երեխաներ են ունենում և սիրում են իրենց բոլոր զավակներին: Յուրաքանչյուր երեխա եզակի է:

Ոմանք տղաներ են, ոմանք աղջիկներ, ոմանք բարձրահասակ են, ոմանք կարճահասակ, ոմանք սիրում են երգել, մյուսները սիրում են գնդակով խաղալ: Ոմանք լավ են կարդում, ոմանք էլ սիրում են մի բան կառուցել:

Ներքևում նկարի՛ր մի լավ բան, որ անում ես քո ընտանիքի համար:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ծ կեղեցին Աստծո Ընտանիքն է

Հիսուսն ասաց ժողովրդին, որ Աստված մեր հայրն է: Որպես լավ հայր՝ Նա խնամում է մեզ: Ով սիրում է Հիսուսին և հետևում նրան, դառնում է նրա եղբայրը և քույրը: Մենք, որպես Եկեղեցի, Աստծո ընտանիքի անդամներն ենք:

Ինչպես մեր ընտանիքներում, այնպես էլ եկեղեցում կան տարբեր տեսակի մարդիկ՝ երիտասարդ ու ծեր, տղաներ ու աղջիկներ, հայրեր ու մայրեր, պապիկներ ու տատիկներ, քեռիներ ու մորաքույրեր, զարմիկներ ու զարմուհիներ և այլն: Ոմանք ունեն սև մազեր, ոմանք՝ շեկ և ոմանք էլ՝ սպիտակ:

Ահա տարբեր բաներ, որ մարդիկ կատարում են եկեղեցում Աստծուն փառաբանելու և շնորհակալություն հայտնելու համար:

երգել



գումար նվիրել

կարդալ
սաղմոսներ

օգնել
քահանային



սովորեցնել
Աստվածաշնչային
պատմություններ

մաս պատրաստել

Հոգևոր Բառարան

Մ ա ս

Օրհնված հաց, որ բաժանվում է պատարագի վերջում:

Աստծո ընտանիքը փառաբանում է Տիրոջը

Լսի՛ր ուսուցչի կողմից ընթերցվող նախադասությունները: Գծով միացրո՛ւ յուրաքանչյուր միտքը համապատասխանող նկարին:

Լիդիան վաճառում էր մանուշակագույն զգեստներ: Նա հավատում էր Հիսուսին: Նա Հիսուսի հետևորդներին ընթրիքի հրավիրեց իր տուն:

Պողոսը վրանագործ էր: Նա շատ էր սիրում Հիսուսին: Նա ճամփորդեց հեռու երկրներ՝ մարդկանց պատմելու Հիսուս Քրիստոսի մասին:

Շուշանիկը Սուրբ Վարդանի դուստրն էր: Նա սովորեցնում էր իր զավակներին սիրել Աստծուն:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Ընտանիքների մասին այս գլխի առաջին դասը ներկայացնում է Աստվածաշնչային առաջին ընտանիքը՝ Ադամին և Եվային: Ընտանիքում ապրելը երեխաների համար կարևոր փորձառություն է: Ընտանիքում երեխաները նաև հայտնագործում են նմանություններ իրենց ծնողների և հարազատների հետ, ինչպես նաև տարբերություններ՝ նրանց ունեցած հետաքրքրությունների, կարողությունների և շնորհների միջև:

Առաջին ընտանիքի պատմության մեջ երեխաները հայտնաբերեցին առանձնահատկություններ իրենց սեփական ընտանիքի՝ հոր, մոր և երեխաների մասին: Նրանք տեսան, թե ինչպես յուրաքանչյուր անձ ուներ տարբեր հետաքրքրություններ և կարողություններ: Դասը վերաբերում էր եկեղեցու ընտանիքին՝ որպես Աստծո ընտանիք: Երեխաները ծանոթացան եկեղեցու անդամների բազում տարբեր շնորհների և հետաքրքրությունների, որոնք մատուցվում են Աստծո փառքի համար:

- Թող ձեր երեխան նկարի Աստծո ստեղծած առաջին ընտանիքի պատկերը: Հանձնարարեք նրան պատմել Ադամի ու Եվայի ընտանիքի պատմությունը:
- Օգնեք ձեր երեխային մտածել իր ընտանիքի մասին և կազմել տոհմածառ: Օգտագործեք ծառի ճյուղ, որ կարելի լինի այն կանգնեցնել ավազով լցված ամանի մեջ: Փոքրիկ թղթերի վրա գրեցեք հայր, մայր, որդի, դուստր: Զույգ թղթիկների վրա գրեցեք պապիկ և տատիկ: Ավելացրեք ձեր ընտանիքի անդամների անունները համապատասխան թղթերի վրա: Յուրաքանչյուր քարտի վերին մասը ծակեք, թել անցկացրեք, հանգույցները կապեք և կախեք քարտերը ծառից:
- Ժամանակ հատկացրեք խոսելու ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասին: Հրավիրեք ձեր երեխային նկարագրելու յուրաքնաչյուրիդ և պատմելու ամեն մեկի ունեցած տարբեր շնորհների մասին: Թող ձեզանից ամեն ոք առաջարկի եղանակներ, որոնցով կկարողանաք ձեր շնորհները մատուցել Աստծուն:

ԴԱՍ 14

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ

**«ԹՈՂ ՔՈ ՀԱՅՐՆ ՈՒ ՄԱՅՐՆ ՈՒՐԱԽ ԼԻՆԵՆ ՔԵԶ ՀԱՄԱՐ,
ԵՎ ԹՈՂ ՈՒՐԱԽԱՆԱ ՆԱ, ՈՎ ԾՆԵԼ Է ՔԵԶ»:**

Առակներ 23:25

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ահա Ավետիսը և Սոնան: Նրանք շատ ուրախ են, որովհետև նոր երեխա են ունեցել, որին սիրում են և խնամում:

Ահա Կարոն և Նունեն: Նրանք փոքրիկ Թամարի ծնողներն են: Թամարը նոր-նոր է սկսել քայլել: Ի՞նչ են զգում ծնողները:

Եվ ահա Արտաշեսը, որ ծնողներին ցույց է տալիս իր տնային աշխատանքը: Ի՞նչ են անում ծնողները: Ի՞նչ եք կարծում, նա լա՞վ է կատարել հանձնարարությունը:

Ծնողները սիրում են իրենց երեխաներին և ուրախանում նրանց մեծանալուց:

Ահա մի բանաստեղծություն, որում մայրը գրում է իր ուրախության մասին.

«Նա կհասկանա, ով մայր է եղել,
Թե ո՞վ է այսօր երջանիկը.
Առաջին անգամ ինձ ջուր է բերել
Այսօր իմ փոքրիկ Արայիկը»:

Սիլվա Կապուտիկյան

Նկարի՛ր և գունավորի՛ր քո դեմքը և մազերը նկարում:

Ի՞նչ ես կարծում, Աբրահամը և Սառան ի՞նչ զգացին, երբ իրենց որդին ծնվեց: Պարզի՛ր, թե ինչ անվանեցին իրենց որդուն:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Աբրահամը և Սառան ծնող են դառնում

Ըստ Ծննդոց 17:15-19, 18:1-15, 21:1-8

Սառա

Աբրահամ

երեխա


Իսահակ

Մի օր Աստված ասաց «Գնա՛ այն երկիրը, որը ցույց կտամ քեզ»:

հնազանդվեց Աստծուն: Նա ճամփորդում էր իր կնոջ՝ հետ, մինչև Աստված ասաց. «Այս տեղը կլինի քո նոր տունը» :

և արդեն շատ ծեր էին և երեխաներ չունեին:

Մի օր Աստված ասաց «Քո կինը՝ , տղա պիտի ունենա և նրան կանվանես»: «Ինչպե՞ս կարող է ինձ նման ծեր մարդը ունենալ», - մտածեց նա :

Ամառային մի շոգ օր հյուրընկալեց երեք անցորդների: Նա ջուր ու հաց տվեց նրանց: Նրանցից մեկն ասաց. «Քո կինը՝ տղա պիտի ունենա գարնանը»:

ապշեց: Նա զգաց, որ Աստված էր խոսում իր հետ: Երբ լսեց այս մասին, ծիծաղեց: Նա շատ ծեր էր ունենալու համար: Ամիսներ անց և տղա ունեցան:

կոչեցին նրան: և շատ ուրախ էին: Նրանք սիրում էին և խնամում նրան: Երբ բավական մեծացավ, որ կարողանում էր քայլել ու խոսել, վազել ու խաղալ, ասաց. «Հիմա խնջույք անելու ժամանակը հասավ»: Մենք կհրավիրենք մեր ընկերներին և կուրախանանք, որովհետև Աստված ուղարկեց մեզ»: Աստված պահեց իր խոստումը:

ՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Երեխաները շատ կարևոր են ծնողների համար: Մեր Եկեղեցին սովորեցնում է մեզ Հովակիմի և Աննայի մասին, ովքեր միշտ աղոթում էին երեխա ունենալու համար: Երկար տարիներ նրանք ամուսնացած էին և արդեն ծեր հասակում էին: Նրանք երեխա չունեին:

ավլեց հատակը

Մի օր Հովակիմը գնաց սարերը և գոչեց. «Տե՛ր, տես թե ինչքան տխուր եմ առանց երեխայի: Խնդրում եմ, օգնի՛ր ինձ հայր դառնալ»:

Նրա կինը՝ Աննան տանն էր: Նա լսեց փողոցում խաղացող երեխաների ուրախ ձայնը: Ա՜խ որքան էր ցանկանում գեթ մի երեխա ունենալ:

երգեց

Ի՞նչ ես կարծում, նա ի՞նչ արեց: Նայի՛ր երեք նկարներին և ✓ նշա՛ն համապատասխան նկարի կողքին:

Հանկարծ մի հրեշտակ հայտնվեց Հովակիմին և ասաց. «Աստված քեզ և քո կնոջը դուստր կպարգևի»:

աղոթեց

Մի քանի ամիս հետո փոքրիկ Մարիամը ծնվեց: Նրա ծնողներն անչափ շնորհակալ էին Աստծուց: Նրանք խոստացան, որ երեխային կմեծացնեն և կհանձնեն Աստծո ծառայությանը: Երբ նա դարձավ երեք տարեկան, ծեր Հովակիմը և Աննան տարան Մարիամին տաճար՝ Աստծո առաջ: Մեծանալով Մարիամը դարձավ մեր Տեր Հիսուսի մայրը:

Հոգևոր Բառարան

Աստվածածին

Աստծո մայրը /Մարիամ/:

Տոնակատարում

Աբրահամը և Սառան Իսահակի ծննդյան առիթով իրենց ուրախությունը ցույց տալու համար տոն կազմակերպեցին:

Ամեն ընտանիք յուրահատուկ ձևով է արտահայտում իր սերը և ուրախությունը: Նկարելով ցույց տուր, թե ինչպես է ընտանիքդ ուրախացնում քեզ:

Օգոստոս

Մենք հայտնում ենք մեր սերը Հիսուսի պապիկին ու տատիկին՝ Հովակիմին ու Աննային, իրենց դուստր Մարիամին մեզ նվիրելու համար: Նրանց տոնի օրը մենք շարականներ ենք երգում եկեղեցում՝ ի պատիվ նրանց հիշատակի:

Սեպտեմբեր

Մենք նաև տոնում ենք նրանց դստեր՝ կույս Մարիամի հիշատակը: Նա դարձավ մեր Տեր Հիսուսի մայրը: Մենք մեծարում ենք նրան և կոչում Աստվածածին:

Սովորի՛ր և երգի՛ր այս շարականն ուսուցչի հետ:



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Աստվածաշնչի միջոցով շատ ծնողների հանդիպեցինք, ովքեր ապրեցին երեխա ունենալու անսահման բերկրանքը: Այս դասում երեխաները տեղեկացան Աբրահամի և Սառայի, նաև Հովակիմի և Աննայի ուրախության մասին. երկու երեխազուրկ զույգեր, ովքեր հավատի շնորհիվ օրհնվեցին զավակներով: Երեխաների ծննդյամբ պատճառված ուրախությունը շարունակվում է ծնողների սրտում նրանց մեծանալիս և զարգանալիս՝ ըստ ծնունդից ստացած Աստվածատուր շնորհների: Աբրահամը մեծ տոն կազմակերպեց, երբ իր որդին աճելով կաթից կտրվեց և սպասեց Աստծո խոստմանը, թե «Նրանով բոլոր ազգերը պիտի օրհնվեն»: Իհարկե, Իսահակի ժառանգների Հովակիմի և Աննայի դստեր՝ կույս Մարիամի միջոցով ողջ մարդկությունը օրհնվեց, և նա դարձավ Աստվածածին՝ աշխարհի Փրկչի մայրը: Արդար ամուսիններ Աբրահամը և Սառան, Հովակիմը և Աննան սիրում էին իրենց երեխաներին և սնեցին նրանց՝ իրականացնելու Աստծո ծրագիրը իրենց կյանքում: Մենք՝ նրանց հոգևոր ժառանգները, կոչված ենք միևնույն առաքելությանը՝ մեր երեխաների մեջ սերմանելու Աստծո ծրագիրը՝ նախախնամված իրենց համար, նույնիսկ նախքան նրանց սաղմնավորվելը: Ահա այս ուղղությամբ մի քանի առաջարկություններ:

1. Երեխայի հետ գտե՛ք և կարդացե՛ք Աստվածաշնչային տողերը, որոնք պատմում են Իսահակի ծննդյան մասին՝ Ծննդոց 21:1-3, 5-8 համարներում: Այնուհետև ասացեք ձեր երեխային իր սեփական բառերով պատմելու դասարանում սովորած պատմությունը: Օգնե՛ք ձեր երեխային միաժամանակ նրան հարցեր տալով: Կարելի է հանձնարարել երեխային նկարելու պատմության նկարը:
2. Երեխային պատմեք նրա ծննդյան օրվա մասին: Նկարագրեք ձեր, Ձեր ամուսնու և ձեր ամբողջ ընտանիքի ապրած ուրախությունը: Նկարագրեք, թե ինչ պատահեց, երբ ընտանիքը և բարեկամները եկան տեսնելու երեխային: Եթե ունեք լուսանկարներ, դրանք միասին նայեք:
3. Հատուկ մի օր ունեցեք, երբ կուրախանաք ձեր երեխայի մեծանալով: Այդ օրը կարող է լինել կամ նրա ծննդյան օրը կամ էլ անվանակոչության օրը:
4. Հետևեք Հիսուսի մեծ ծնողների՝ Սուրբ Հովակիմի և Աննայի օրինակին, հաճախակի առաջնորդելով ձեր երեխային եկեղեցի և սովորեցնելով նրան բարեպաշտ լինելու լավ սովորությունը: Միասին աղոթեք Հիշարժան Տողը.

**«Թող քո հայրն ու մայրն ուրախ լինեն քեզ համար,
և թող ուրախանա նա, ով ծնել է քեզ»:**

ԶԱՔԱՐԻԱՆ ԵՎ ԵՂԻՍԱԲԵԹԸ ՏՈՆՈՒՄ ԵՆ

«ՕՐՀՆՅԱԼ Է ՏԵՐ ԱՍՏՎԱԾ, ՈՐ ԵԿԱՎ ԵՎ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ»:

Ըստ Ղուկասի 1:68

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Երբ երեխա է ծնվում, ծնողները և բարեկամները շատ են ուրախանում: Նրանք ցանկանում են իմանալ երեխայի անունը: Նրանք հետաքրքրվում են նաև պարզել, թե ինչ գույն ունեն մանուկի

աչքերը և մազերը

«Ո՞ւմ է նման երեխան», - հարցնում են նրանք:

Հայրերը և մայրերը շատ երազանքներ են կապում իրենց երեխաների հետ: Նրանք ուզում են իմանալ, թե իրենց երեխան մեծանալիս ինչ պիտի դառնա: Հիշում ես մի ժամանակ, երբ քո ծնողները սիրալիր հարցնում էին քեզ. «Երբ մեծանաս, ի՞նչ ես ուզում դառնալ»:

Գրի՛ր 1 այն նկարի կողքին, որն ամենաշատը կուզենայիր դառնալ:

Գրի՛ր 2 այն նկարի կողքին, որը կլիներ քո երկրորդ ընտրությունը:

Երբ մեծանամ, ուզում եմ դառնալ

_____:

Գտի՛ր Զաքարիայի և Եղիսաբեթի որդու անունը: Հրեշտակն ասաց, թե ինչ պիտի դառնա նրանց զավակը:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Զաքարիան և Եղիսաբեթը տոնում են

Ըստ Ղուկասի 1:5-25,57- 80

Զաքարիան անուշահոտ խնկով խնկարկում էր տաճարում: Հանկարծ նրան հայտնվեց Տիրոջ հրեշտակը, և նա վախեցավ: Հրեշտակն ասաց. «Մի՛ վախեցիր, Զաքարիա՛: Աստված լսեց քո աղոթքը: Քո կինը՝ Եղիսաբեթը, շուտով որդի կունենա: Նրա անունը Հովհաննես կդնես: Քո որդին Տիրոջ մեծ ծառա պիտի լինի»:

«Հովհաննեսի շնորհիվ ծնողները պիտի առավել մտածեն իրենց երեխաների մասին: Եվ մարդիկ, որ հիմա չեն հնազանդվում Աստծուն, պիտի սկսեն ուղղվել և դեպի լավը փոխել իրենց կյանքը: Հովհաննեսը պիտի պատրաստի ժողովրդին Տիրոջ համար»:

Զաքարիան հարցրեց. «Ինչպե՞ս պիտի իմանամ, որ դա կպատահի. չէ՞ որ ես և կինս շատ ծեր ենք»: Հրեշտակը պատասխանեց. «Ես Գաբրիելն եմ: Աստված ինձ ուղարկեց քեզ հայտնելու այս ավետիսը: Բայց քանի որ դու ինձ չհավատացիր, պիտի չկարողանաս խոսել՝ մինչև այդ ամենը տեղի չունենա»:

Զաքարիան գնաց տուն: Քիչ ժամանակ հետո նրա կինը հղիացավ: Երբ Եղիսաբեթի որդին ծնվեց, նրա հարևանները և բարեկամներն ուրախացան:

Նրանք ցանկանում էին երեխայի անունը Զաքարիա դնել: Բայց Եղիսաբեթն ասաց. «Ո՛չ, նրա անունը Հովհաննես պիտի լինի»: Այս մասին նրանք հարցրեցին երեխայի հորը՝ Զաքարիային: Զաքարիան գրեց. «Նրա անունը Հովհաննես է»:

Հենց այդ պահին Զաքարիան սկսեց խոսել: Բոլորը զարմացած հարցնում էին. «Այս երեխան, որ մեծանա, ի՞նչ պիտի դառնա»: Նրանք գիտեին, որ Տերը նրա հետ է: Ապա Սուրբ Հոգին իջավ Զաքարիայի վրա և նա սկսեց փառաբանել Աստծուն:

«Օրհնյալ է Իսրայելի Տեր Աստվածը,
Մեր Տերը հզոր Փրկիչ տվեց մեզ:
Եվ դո՛ւ, ո՛վ մանուկ, Բարձրյալի մարգարեն պիտի կոչվես,
որովհետև պիտի գնաս Տիրոջ առաջից՝ պատրաստելու նրա ճանապարհները»:

Հովհաննեսը մեծանում էր, և Աստծո Հոգին նրան զորացնում էր:

Զաքարիայի և Եղիսաբեթի նման
քո ծնողները և ընտանիքը խնդրում են, որ Աստված օրհնի քեզ՝
դառնալու այնպիսի մարդ, որ օգնես մյուսներին:
Ահա նրանց աղոթքը քեզ համար.

«Թող Աստված աճեցնի _____ Իր խնամքի և
քո անունը

շնորհների ներքո»:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Փառաբանենք Աստծուն աղոթքով և անուշահոտ խնկով

Զաքարիան քահանա էր: Նա ծառայում էր Աստծուն և օգնում մարդկանց աղոթել տաճարում: Նա խունկ էր ծխում հատուկ սպասքի մեջ: Վեր բարձրացող խնկի քուլաները անուշ հոտ էին տարածում:

Խունկը հիշեցնում էր մարդկանց, որ իրենց աղոթքները բարձրանում են առ Աստված խնկի քուլաների նման: Զաքարիան աղոթեց հետևյալ սաղմոսը ժողովրդի հետ և ասաց.

բուրվառ

«Տե՛ր, թող աղոթքս քեզ ուղղվի որպես խունկ»:
Սաղմոս 140:2

Մենք ամեն օր աղոթում ենք այս նույն սաղմոսը եկեղեցում Երեկոյան ժամերգության ընթացքում:

Սարկավագը խնկարկում է մի սպասքի միջոցով, որը կոչվում է բուրվառ: Երբ սարկավագը խնկարկում է մեզ, մենք խաչակնքվում ենք:

Ե ԿԵՂԵՑԻՆ ՏՈՆՈՒՄ Է ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Ամեն տարի Եկեղեցին տոնում է Հովհաննեսի ծնունդը՝ Սուրբ Ծննդյան տոնի օրերից անմիջապես հետո: Զաքարիայի և Եղիսաբեթի որդին՝ Հովհաննեսը մեծանալով դարձավ Աստծո հատուկ օգնականը: Նա պատրաստեց ժողովրդին՝ Հիսուսին ընդունելու համար:

Հովհաննեսը մկրտեց Հիսուսին Հորդանան գետում, որի համար մենք Հովհաննեսին կոչում ենք Մկրտիչ: Նա գիտեր, որ Հիսուս Աստծո կողմից ուղարկված Փրկիչն է: Հովհաննեսը քարոզում էր ժողովրդին, որ հետևեն Հիսուսին:

Ահա մի քանի եղանակներ, որոնցով կարող ենք նմանվել Հովհաննես Մկրտչին:

Յուրաքանչյուր եղանակ գծով միացրո՛ւ համապատասխանող նկարին:

1. «Լուսինե՛, ներողությո՛ւն խնդրիր»:

2. Կիսի՛ր հացդ քաղցածի հետ:

3. Մի՛ կռվիր ընկերներիդ հետ:

Ե կե՛ք երգենք



Հոգևոր Բառարան

Բ ո ւ ր վ ա ռ

Խնկի վառարան:

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասը երեխաներին հաղորդեց այն ուրախությունը, որ նրանք պարգևում են իրենց ընտանիքներին: Այդ ուրախությունը երեխան ճանաչում է ծնողի յուրաքանչյուր ժպիտից, յուրաքանչյուր հաստատումից, տրված յուրաքանչյուր խրատից: Հավանաբար հարցրած կլինեք ձեր երեխային. «Երբ մեծանաս, ի՞նչ պիտի դառնաս»: Սա ձեր երեխայի մեջ կարթնացնի ճանաչողությունը՝ իր ունեցած ընդունակությունների ու շնորհների մասին:

Ձեր երեխայի հետ.

1. Կարդացե՛ք Ղուկասի Ավետարանի 1:5-25, 57-66 հատվածները:
2. Գնացե՛ք եկեղեցի և նրան ցույց տվեք մկրտության ավազանը: Շատ եկեղեցիներում մկրտության ավազանի վերևում կամ կողքում պատից սովորաբար կախված է Հիսուսի մկրտության սրբանկարը: Ուշադի՛ր նայեք սրբապատկերին և ցույց տվեք, որ ձեր երեխան ճանաչի Հովհաննես Մկրտչին:
3. Օգնե՛ք երեխային թղթի էջի վրա գրելու Հովհաննեսին տրվող բնութագրական անունները՝ Մկրտիչ /մկրտող/, Կարապետ /քարավանն առաջնորդող/: Կարելի է նաև ավելացնել դրանցից բխող այլ անուններ, ինչպես օրինակ՝ Մկո կամ Մուկուչ՝ Մկրտիչի համար, Կարո՝ Կարապետի համար:
4. Եթե ձեր երեխան կոչվել է Հովհաննես Մկրտչի անունով, նշե՛ք նրա անվանակոչության օրը: Կամ, եթե ձեզ ծանոթ տղաներից մեկը կրում է հիշյալ անուններից որևէ մեկը, թող ձեր երեխան շնորհավորի իր ընկերոջը և ասի. «Անունո՛վդ ապրես»:

ԴԱՍ 16

ՀՈՎՍԵՓԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՀԻՍՈՒՍԻ ԵՐԿՐԱՎՈՐ ՀԱՅՐԸ

«ՀԱՅՐ ՄԵՐ, ՈՐ ԵՐԿՆՔՈՒՄ ԵՍ, ԹՈՂ ՍՈՒՐԲ ԼԻՆԻ ՔՈ ԱՆՈՒՆԸ»:

Ըստ Մատթեոսի 6:9

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ամեն մարդ ունի հայր և մայր: Նրանք սիրում են մեզ՝ իրենց յուրահատուկ կերպերով:

Նայի՛ր հայրերին յուրաքանչյուր նկարի մեջ: Ի՞նչ են անում նրանք: Ընտրի՛ր այն բառը, որ նկարագրում է յուրաքանչյուր պատկերը և այն գրի՛ր նշված տողի վրա:

_____

խաղալ

պաշտպանել

սովորեցնել

սիրել

ուտելիք գնել

_____

_____

_____

_____

Երբեմն, երբ հայրը հեռու է գտնվում, երեխան պիտի ունենա մեկին, ով նրան հոր նման կլինի: Դա կարող է լինել պապիկը, քեռին կամ ընկերը:

Աստված ասաց, որ Հովսեփը դառնա իր որդու՝ Հիսուսի հայրը: Ահա նրա պատմությունը:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Հովսեփի երեք երազները

Ըստ Մատթեոսի 1:18-25, 2:13-23

Մարիամ

Հովսեփ

Հիսուս

հրեշտակ

ապրում էր Նազարեթում: Նա նշանված էր

անունով մի մարդու հետ: Մի օր նրան մի

երևաց և ասաց. «Օրհնյա՛լ ես դու : Տերը քեզ

հետ է: Մի որդի կունենաս և նրա անունը կդնես:

Նա պիտի Աստծո Որդի կոչվի»: համաձայնեց,

ինչ Աստված պատվիրեց իրեն:

երազ տեսավ: խոսեց նրա հետ: «Հովսե՛փ,

երեխան, որ պիտի ծնի Սուրբ Հոգուց է: Գնա՛ և

ամուսնացիր նրա հետ: Հետո, երբ երեխան ծնվի,

նրա անունը կդնես,

որովհետև նա պիտի փրկի իր

ժողովրդին իրենց մեղքերից:

և ամուսնացան:

Նրանք գնացին Բեթղեհեմ՝

հայրենի քաղաքը՝

մարդահամարին գրանցվելու

համար: Բեթղեհեմում՝ մսուրի

մեջ ծնվեց որդին, որովհետև իջևանատանը նրանց համար տեղ չգտնվեց:

Նրան կոչեցին :

Հովսեփը Հիսուսին տանում է Եգիպտոս

Երազում կրկին մի երևաց : «Վե՛ր կաց, Հովսե՛փ, արթնացի՛ր: Հերովդես արքան ուզում է սպանել քո որդուն: Վերցրու երեխային և նրա մորը և գնա Եգիպտոս: Այնտեղ կմնաս այնքան ժամանակ, մինչև քեզ կասեմ, որ վերադառնաս»:

և տարավ Եգիպտոս: Աստված առաջնորդեց նրանց եգիպտացի մի բարի ընտանիք, ովքեր նրանց ընդունեցին իրենց տանը: Նրանք Եգիպտոսում մնացին երեք տարի:

Երբ դարձավ երեք տարեկան , Աստված կրկին անգամ ուղարկեց երազում:

ասաց , որ արդեն կարող են ապահով վերադառնալ Իսրայել: Իրենց հավատարիմ ավանակի վրա նստած և հետ վերադարձավ հայրենիք: Երբեմն իջնում էր էշից, բռնում հոր ձեռքից և քայլում նրա հետ:

Երբ հասան Իսրայել, գնաց իր ծննդավայր Նազարեթ քաղաքը և իր ընտանիքի հետ ապրեց այնտեղ:

Հիսուսը սովորում է իր հորից

Հովսեփը լավ հայր էր Հիսուսի համար: Հիսուսը սիրում և հարգում էր նրան: Նա շատ բաներ սովորեց իր հորից՝ Հովսեփից: Նայի՛ր նկարներին և այս ☺ նշանը գծի՛ր այն պատկերների կողքին, որոնք, քո կարծիքով, Հիսուսը սովորեց Հովսեփից:

ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մեր Երկնավոր Հայրը

Հովսեփը Հիսուսին սովորեցրեց սիրել Աստծուն՝ մեր Երկնավոր Հորը: Հիսուսն աղոթում էր իր ծնողների հետ և հոր ձեռքից բռնած ամեն շաբաթ գնում ժողովարան:

Երբ Հիսուսը մեծացավ, նա իր աշակերտներին սովորեցրեց, թե ինչպես պետք է աղոթեն: Ուսուցչի հետ արտասանի՛ր այս աղոթքը:

Տերունական աղոթք

Հա՛յր մեր, որ երկնքում ես,
սո՛ւրբ թող լինի քո անունը.
քո թագավորությո՛ւնը թող գա.
քո կա՛մքը թող լինի երկրի վրա,
ինչպես որ երկնքում է՛.
մեր հանապազօրյա հացը
տո՛ւր մեզ այսօր.
և ների՛ր մեզ մեր հանցանքները,
ինչպես որ մենք ենք ներում նրանց,
որ հանցանք են գործում մեր դեմ.
և մի՛ տար մեզ փորձության,
այլ փրկի՛ր մեզ չարից.
որովհետև քո՛նն է թագավորությունը
և զորությունը և փառքը հավիտյանս,
ամեն:



Հոգևոր Բառարան

Ժողովարան

Հրեաների աղոթքի տունը:

Խրիմյան Հայրիկ

Մկրտիչ Խրիմյանը մեր Եկեղեցու սիրելի կաթողիկոսներից է: Նա շատ էր հոգ տանում իր ժողովրդի մասին: Սովորեցնում էր նրանց, թե ինչպես պետք է միասին հաշտ ու համերաշխ ապրեն: Նաև իր ժողովրդին սովորեցրեց խնամել այն ամենը, ինչ գոյություն ունի աշխարհում՝ բույսերը, կենդանիները, գետերը և ծովերը: Վեհափառ Հայրապետը հիշեցնում էր մարդկանց, որ այդ ամենը մեզ տրված Աստծո պարգևն է:

Կարմիր տառերը հերթական կարգով գրի՛ր ներքևի գծիկների վրա, որպեսզի իմանաս, թե ժողովուրդն ինչ էր կոչում իր սիրելի կաթողիկոսին:

Ժողովուրդը նրան անվանում էր՝ __ __ __ __ __ __ :

ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Այս դասում ձեր երեխան լսեց պատումներ Հիսուսի ծննդյան և վաղ տարիների մասին: Դասի կենտրոնում էր Հովսեփի հայրությունը՝ որպես Հիսուսի երկրավոր հայր: Երեխաները հեշտությամբ կկապակցեն ընտանիքում մեծանալու իրենց սեփական փորձառությունը նորածին Հիսուսի՝ Հովսեփի և Մարիամի ծնողական սերը և հոգատարությունը վայելելու հետ:

Հուսով ենք, որ բոլոր երեխաները վայելում են իրենց հայրերի սիրալիր ներկայությունը: Առավել օրհնություն է, երբ երեխաները նաև ունենում են հոր նման այլ անձեր, ինչպես պապիկը, հորեղբայրը, քեռին, կամ էլ լավ ընկերը: Այս անհատները աչքի են ընկնում երեխաների նկատմամբ իրենց հոգատարությամբ և ժամանակ են հատկացնում՝ նրանց կրթելու և դաստիարակելու այն ամենով, ինչ անհրաժեշտ է նրանց լավ մարդ դառնալու համար: Սուրբ Հովսեփը հենց այդպիսի անձ եղավ Հիսուսի կյանքում:

Նիկիական հանգանակում մեր Եկեղեցին դավանում է, որ Սուրբ Երրորդության երկրորդ անձը «կատարելապես ծնվեց Սուրբ Կույս Մարիամից, մարմին առավ նրանից, հոգի և միտք և այն ամենը ինչ հատուկ է մարդուն՝ ճշմարիտ կերպով և ոչ երևութապես»: Հետևաբար, մեծացող Հիսուսին հարկավոր էր երկրավոր հայր, ով պետք է խնամեր նրան, հոգար նրա կարիքները և առաջնորդեր Աստվածսիրության: Գերագույն պատիվը, որ Հիսուսը շնորհեց իր երկրավոր հորը՝ Հովսեփին, այն սերն ու հատուկ կապն էր, որ մեծանալով տածեց Աստծո՝ իր Երկնավոր Հոր նկատմամբ: Պատվելով Հովսեփի դրական պատասխանը Հիսուսի երկրավոր հայրը դառնալու Աստծո կանչին, Եկեղեցին ճանաչում է նրան որպես Աստվածահայր և հիշատակում սրբերի շարքում:

1. Սուրբ Հովսեփի հետևողությամբ արտասանեք ձեր երեխայի հետ այն աղոթքը, որ մեզ տրվեց իր որդու՝ Հիսուսի կողմից: Այն կոչվում է Տերունական Աղոթք: Սովորեցրեք նրանց աղոթքից առաջ խաչակնքվել և ասել. «Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, ամեն»: Այնուհետև սկսեք աղոթքը.
   «Հա՛յր մեր, որ երկնքում ես, սո՛ւրբ թող լինի քո անունը. քո թագավորությո՛ւնը թող գա. քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է՛. մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ այսօր. և ների՛ր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ. և մի՛ տար մեզ փորձության, այլ փրկի՛ր մեզ չարից. որովհետև քո՛նն է թագավորությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն»:
2. Օգնեք ձեր երեխային ճանաչել և նկարագրել նրան կամ նրանց, ովքեր հոր նման են իրենց համար: Թող նրանք նմանատիպ հիշարժան մի դեպք գծանկարեն:

ԳԼՈՒԽ Ե

ԱՍՏՈՇ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՈՆՈՒՄ Է

Եկեղեցու մեծ ընտանիքը նշում է շատ տոներ: Խաչվերաց տոնը նշվում է սեպտեմբեր ամսին, իսկ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի ծնունդը՝ հունվարին:

ԳԼՈՒԽ Ե

Աստծո ընտանիքը տոնում է

Ծնողների համար

Խաչվերաց և Սուրբ Ծննդյան տոներին նվիրված դասերը լավ օրինակներ են, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է եկեղեցական ընտանիքը նշում կարևոր իրադարձությունները:

ԽՍՉՎԵՐԱՑ ՏՈՆԸ

«ՔԱՎ ԼԻՑԻ, ՈՐ ԵՍ ՊԱՐԾԵՆԱՄ ԱՅԼ ԲԱՆՈՎ, ՔԱՆ ՄԻԱՅՆ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉՈՎ»:

Գաղատացիներին 6:14ա

ՀԱՅՏՆԱԳՈՐԾԵՆՔ

Ամեն առավոտ դպրոց գնալու ճանապարհին տեսնում ես շատ նշաններ:

Փողոցի անկյունում տեսնում ես նշանը: Դա մեքենաներին կանգնելու ազդանշան է ցույց տալիս:

Երբ տեսնում ես այս նշանը, գիտես, որ մոտակայքում դպրոց կա և երեխաները շտապում են դասի:

Նայի՛ր այս բոլոր նշաններին: Ինչի՞ մասին են դրանք հիշեցնում: Յուրաքանչյուր նշանի տակ գրի՛ր համապատասխանող բառը:

_____ _____ _____

Նշանները հիշեցնում են մեզ մի բանի մասին: Ի՞նչ բաներ կան, որ հիշեցնում են մեզ Հիսուսի մասին: Նկարի՛ր դրանցից մեկը:

Հիսուսը մեզ տվեց հատուկ մի նշան՝ իրեն հիշելու համար: Կարդա՛ հաջորդ էջի պատմությունը այս մասին իմանալու համար:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Հիսուսը նշան է տալիս մեզ

Ըստ Հովհ. 3:1-15, Մարկ. 15:20-25, 16:1-20 և Մատթ. 24:30



Նիկոդեմոսը հրեա կարևոր պաշտոնյա էր, որ ապրում էր Երուսաղեմում: Նա սիրում էր լսել Հիսուսի ուսուցումները: Նա գիտեր, որ Քրիստոս լավ լուր ուներ մարդկանց համար: Նա լսեց Հիսուսի հետևյալ խոսքը. «Զղջացե՛ք ձեր մեղքերի համար, մկրտվե՛ք, ընդունե՛ք Սուրբ Հոգին և կդառնաք Աստծո զավակներ»:

«Ինչպե՞ս կարող է դա լինել»,- հարցրեց Նիկոդեմոսը: Հիսուսը բացատրեց. «Աստծո Որդին պետք է խաչը բարձրացվի: Ով հավատա նրան, հավիտյան կապրի»: Երբ Հիսուսի ընկերները լսեցին նրա խոսքը խաչվելու մասին, տխրեցին:

Մի օր Հիսուսը խաչվեց: Նիկոդեմոսը տխուր դիտում էր, թե ինչպես է իր ուսուցիչը մահանում խաչի վրա: Նրա ընկերներից մեկն իջեցրեց Հիսուսի մարմինը խաչից: Արցունքներն աչքերին նրանք փաթաթեցին նրան և դրեցին նոր փորված գերեզմանի մեջ:

Երեք օր հետո նրանց արցունքները փոխվեցին ուրախության: Որոշ կանայք, ովքեր գերեզման էին գնացել, բարի լուրով վերադարձան. «Հիսուս Քրիստոս հարություն է առել», - կանչում էին նրանք: «Ես տեսա՛ Տիրոջը: Նա կենդանի՛ է», - ասաց Մարիամ Մագդաղենացին:

Հարություն առնելուց հետո Հիսուսը շատ անգամներ եկավ և խոսեց իր ընկերների հետ: Նա թույլ տվեց, որ նրանք շոշափեն իր ձեռքերը: Նրանց հետ Հիսուսը հաց ու ձուկ կիսեց: Եվ լավագույն բանն այն էր, որ պատվիրեց նրանց հիշել իր խոստումը:

Երկինք համբարձվելուց հետո Հիսուսի ընկերները հիշեցին նրա խոսքերը. «Մի՛ տխրեք: Ես միշտ ձեզ հետ կլինեմ: Ինձ կրկին կտեսնեք: Երբ օրը գա, կտեսնեք իմ նշանը երկնքում: Ապա ինձ կտեսնեք երկնքի ամպերի վրա՝ գալով մեծ զորությամբ և փառքով»:



Գունավորի՛ր նկարը՝ Հիսուս Քրիստոսի նշանը պարզելու համար:

Համարակալված մասերը գունավորի՛ր նույնանիշ մատիտներով:

Քրիստոնյաները գտնում են Հիսուսի խաչը

Հիսուսի հարությունից շատ տարիներ հետո քրիստոնյաները կորցրեցին խաչը, որի վրա Հիսուս մահացավ: Հեղինե թագուհին Հիսուսի հետևորդներից էր: Նա գնաց Երուսաղեմ գտնելու Հիսուսի խաչը:

Մի ծեր մարդ հիշում էր, որ խաչը մի կողմ է գցվել ու թաղվել կեղտի ու աղբի կույտի տակ:

Հեղինե թագուհին աշխատողներ վարձեց, որ փորեն աղբակույտը: Նրանք գտան Հիսուսի խաչը և վեր բարձրացնելով փառաբանեցին Սուրբ Խաչը: Նրանք խաչը ուրախությամբ տարան Սուրբ Հարության տաճար:

Քրիստոնյաները պատվում են Հիսուսի Խաչը

Մենք պատվում ենք Հիսուսի Սուրբ Խաչը, երբ համբուրում ենք և խոնարհվում նրա առաջ:

Սուրբ Խաչը հիշեցնում է մեզ, որ



Հիսուսը մահացավ մեր մեղքերի համար:
Հիսուսը հարություն առավ մեռելներից:
Հիսուսը սիրում է մեզանից յուրաքանչյուրին:
Հիսուսը միշտ մեզ հետ է:

Հոգևոր Բառարան

Ա ն դ ա ս տ ա ն

Աղոթք՝ աշխարհի չորս կողմերը օրհնելու համար:

Մենք տոնում ենք

Ամեն տարի մենք նշում ենք Խաչվերաց տոնը: Այդ օրը, Երեկոյան ժամերգությունից հետո կատարվում է նաև խաչի թափոր: Խաչը զարդարվում է անուշահոտ ռեհանով և բուրավետ այլ ծաղիկներով: Եպիսկոպոսը կամ քահանան բարձր պահում է խաչը և նրանով օրհնում ժողովրդին և աշխարհի չորս կողմերը Անդաստանի արարողությամբ: Նա ժողովրդի վրա օրհնված վարդաջուր է ցողում:

Երգենք այս շարականը՝ ի պատիվ Սուրբ Խաչի:

Քո խաչին երկրպագում ենք, ո՜վ Քրիստոս,
և քո սուրբ խաչելությունը մեծարում:



ՏԱՆԸ՝ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ

Եկեղեցու տոներն օգնում են մեզ արտահայտել մեր հավատքը սրբազան արարողությունների միջոցով: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչը լուսաշող նշանն է իր զոհաբերող սիրո: Նա մահացավ խաչի վրա՝ փրկելու մեզ մեղքի կապանքից: Իր հարությամբ նա մահվան գործիք հանդիսացող խաչը փոխակերպեց մահվանը հաղթող նշանի: Խաչվերացը Սուրբ Խաչին նվիրված չորս տոներից մեծագույնն է: Այն տոնվում է սեպտեմբերի 15-ին մոտակա կիրակի օրը:

Եկեղեցու վաղ ժամանակներից քրիստոնյաները հատուկ հարգանք են տածում Սուրբ Խաչի նկատմամբ: Պատվելով խաչը մենք երկրպագում ենք խաչյալին: Սուրբ Հակոբոս առաքյալը՝ Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը, առաջին անգամ բարձրացրեց խաչը ի տես հավատացյալների: Նա երգեց այս շարականը, որը մենք երգում ենք ոչ միայն խաչի տոներին, այլև Ավագ Շաբաթվա ընթացքում.

«Քո խաչին երկրպագում ենք, ո՜վ Քրիստոս, և քո սուրբ խաչելությունը մեծարում, և քո սուրբ հարությունը փառավորում. եկե՛ք հավատացյալներ, երկրպագենք մեր Քրիստոս Աստծուն, որ եկավ իր ձեռքերը տարածելու խաչի վրա՝ շնորհելով իր օրհնությունը աշխարհին»:

Առաջնորդեք ձեր երեխային, որպեսզի նա պատշաճ հարգանք դրսևորի Սուրբ Խաչի հանդեպ:

1. Թույլ տվեք, որ նա կրի իր մկրտության խաչը:
2. Սովորեցրեք նրան ճիշտ խաչակնքվել:
3. Եթե տան բակում հողամաս ունեք, մի փոքր տեղ ռեհան կամ դաղձ ցանեք: Խաչվերաց տոնի նախորդ օրը դրանք քաղեք և տարեք եկեղեցի՝ խաչի թափորի և անդաստանի արարողության ժամանակ օգտագործելու համար:
4. Աշխատեք սովորել խաչին նվիրված վերոնշյալ շարականը:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ

«ԱՀԱ ՁԵՋ ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԱՎԵՏՈՒՄ»:

Ըստ Ղուկասի 2:10

Հայտնագործենք

«Անո՛ւշ, մայրս խոստացել է, որ հաջորդ շաբաթ մեր ընտանիքը և ընկերները պիտի խնջույքի գնան», - ասաց Կարինեն:

Կարինեն շատ ուրախ է: Նա հույս ունի, որ մայրը կպահի իր խոստումը:

Մտածի՛ր երբևէ մեկին տված քո խոստման մասին:

Շրջանակում նկարի՛ր քո խոստումը:

Աստված խոստում է տալիս

Երկար ժամանակ առաջ Աստված իր ժողովրդին խոստացավ, որ մի փրկիչ պիտի ուղարկի: Նա Գաբրիել հրեշտակին ուղարկեց Իսրայելի Նազարեթ քաղաքը: Հրեշտակը լավ լուր ավետեց Մարիամ անունով երիտասարդ աղջկան:

«Մարիա՛մ, դու շնորհ գտար Աստծո առաջ: Դու մի որդի պիտի ունենաս և նրա անունը Հիսուս կդնես: Նա Աստծո Որդի պիտի կոչվի»: Մարիամն ասաց. «Թող լինի այնպես, ինչպես Աստված է կամենում»:

ԱՍՏՎԱԾԱԾՈՒՆՉ

Աստված պահում է իր խոստումը. Հիսուսը ծնվեց

Ըստ Ղուկ. 2:1-20, Հովհ. 3:1-14, Մարկ. 15:20-25, 16:1-20 և Մատթ. 24:30

Մարիամը և Հովսեփը գնացին Բեթղեհեմ՝ մարդահամարին գրանցվելու համար: Նրանք մնալու տեղ չգտան հյուրանոցում և իջևանեցին գոմում: Այդ ընթացքում ծնվեց Մարիամի որդին: Նա նորածին երեխային փաթաթեց շորերով և դրեց մսուրի մեջ:

Հովիվները սարի վրա հսկում էին իրենց ոչխարների հոտը: Հանկարծ հայտնվեց Աստծո հրեշտակը, և պայծառ լույս տարածվեց նրանց շուրջը: Հրեշտակն ասաց. «Մի՛ վախեցեք: Ձեզ լավ լուր պիտի ավետեմ: Աստված պահեց իր խոստումը: Այսօր Հիսուս Քրիստոս ծնվեց Բեթղեհեմում: Դուք նրան կգտնեք շորերով փաթաթված ու դրված մսուրի մեջ»:

Հրեշտակները փառաբանում էին Աստծուն. «Փա՜ռք Աստծուն բարձունքներում, խաղաղություն երկրի վրա և հաճություն մարդկանց մեջ»:

Հովիվներն ասացին. «Եկե՛ք գնանք տեսնելու Աստծո կողմից ասվածները»: Երբ նրանք գտան Մարիամին և Հովսեփին, տեսան մանուկ Հիսուսին պառկած մսուրի մեջ: Դա եղավ այնպես, ինչպես նկարագրել էր նրանց հրեշտակը: Նրանք փառաբանեցին Աստծուն իրենց տեսած հրաշքի համար:

ՎՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հիսուսը եկավ լուսավորելու աշխարհը և ուրախություն բերելու բոլոր մարդկանց: Երբ հրեշտակները հովիվներին հայտնեցին Հիսուսի ծննդյան լուրը, Աստծո լույսը լցվեց երկնքում և հովիվների շուրջը:

Մենք տոնում ենք Հիսուս Քրիստոսի՝ մեր Լույսի ծնունդը մոմեր վառելով: Սուրբ Ծննդյան նախօրեին հավաքվում ենք եկեղեցում՝ լսելու Աստծո խոստման պատմությունները: Ապա յուրաքանչյուրը եկեղեցում վառում է իր մոմը և հոգևոր երգերով փառաբանում Աստծուն:

Հոգևոր Բառարան

Փ ա ռ ք

Գովասանք:

Նկարի՛ր ինքդ քեզ և վա՛ռ գունավորիր քո մոմը:

Փա՞ռք Աստծուն բարձունքներում, խաղաղություն երկրի վրա և հաճություն մարդկանց մեջ:

Մենք տոնում ենք Հիսուսի Ծնունդը և Մկրտությունը

Սուրբ Ծննդյան առավոտ կատարվում է Սուրբ Պատարագ: Ապա տոնում ենք Հորդանան գետում Հիսուսի մկրտությունը եկեղեցում: Խորանի վրա դրվում է ջրով լի մեծ կաթսա: Քահանան խաչով և աղավնաձև անոթից թափվող Սուրբ Մյուռոնով օրհնում է ջուրը: Բոլորը մոտենում են, խմում սուրբ ջուրը և համբուրում խաչը:

Քահանան խնդրել է քեզ օգնել իրեն՝ պատրաստվելու ջրօրհնեքին: Գունավորի՛ր երեք առարկաներ, որոնք Տեր Հայրը պիտի օգտագործի արարողության ընթացքում:

Փոխանցենք Սուրբ Ծննդյան ավետիսը

Երբ հովիվները վերադարձան իրենց ոչխարների հոտի մոտ, փառաբանում էին Աստծուն և բոլորին հայտնում ուրախ ավետիսը:

Հովիվների նման մենք փառաբանում ենք Աստծուն և հայտարարում Հիսուսի ծննդյան ավետիսը տարբեր եղանակներով: Սուրբ Ծննդյան օրերին մենք երգում ենք շարականներ և միմյանց բարևում հատուկ ողջույնով.

Ողջույն տվողն ասում է.

«Քրիստոս ծնվեց և հայտնվեց,»

Ողջույնն ընդունողը պատասխանում է.

«Օրհնյալ է հայտնությունը Քրիստոսի»:

Երգենք Սուրբ Ծննդյան տաղը



Տանը՝ ընտանիքի հետ

Մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան տոնը մեր Եկեղեցում նշվում է հունվարի 6-ին: Այն ընդգրկում է ոչ միայն Փրկչի ծնունդը, այլև ծննդյան հետ կապված շատ իրադարձություններ, ինչպես՝ մոգերի այցը, Հիսուսի մկրտությունը, փախուստը Եգիպտոս և այլն: Այս բոլոր իրադարձությունները մեզ հայտնի են դարձնում Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդի լինելու իրողությունը: Այս պատճառով տոնը կոչվում է նաև «Աստվածահայտնություն»:

Սուրբ Ծննդյան տոնն ուրախություն է բերում երեխաներին, որովհետև այն ուղեկցվում է նվերներ բաժանելու սովորությամբ: Արժե երեխաների մեջ սերմանել այն ընկալումը, որ մենք նրանց նվերներ ենք տալիս, որովհետև Հիսուսը մեծագույն նվերն է, որ Աստված պարգևեց մարդկությանը: Երեխայի ուրախությունն ավելացրեք ոչ միայն տոնի հետ կապված ընտանեկան խնջույքներով, այլ ամենակարևորը եկեղեցական արարողություններին մասնակցելու միջոցով:

1. Միասին գնացեք եկեղեցի Սուրբ Ծննդյան տոնի նախօրեին՝ մասնակցելու Ճրագալույցի արարողությանը: Երեխաների համար Հիսուսի՝ աշխարհի լույսը լինելու ճանաչումը որոշակիորեն կապված է ամբողջ եկեղեցում մոմերը վառելու հետ:
2. Ավետարաններից կարդացեք Հիսուսի ծննդյան հատվածները՝ հատկապես Ղուկասի Ավետարանի 2:1-21 համարներում: Ասացեք ձեր երեխային այն վերապատմելու իր սեփական բառերով:
3. Թող նա նկարի ծննդյան մսուրի տեսարանը կամ պլաստիրինից պատրաստի հետևյալներից մեկին՝ Մարիամին, Հովսեփին, մանուկ Հիսուսին, հրեշտակներին, կենդանիներին կամ երեք մոգերին:
4. Սուրբ Ծննդյան սրբապատկերը դրեք ձեր տան սրբի անկյունում:
5. Սուրբ Ծնունդը նշեք եկեղեցի հաճախելու, Սուրբ Պատարագին մասնակցելու և հաղորդություն ստանալու միջոցով: Ներկա եղեք Ջրօրհնեքի արարողությանը, որը խորհրդանշում է Հիսուսի մկրտությունը, և խմեք օրհնված ջրից:
6. Միմյանց բարևեք Սուրբ Ծննդյան ողջույնով.
   Ողջույն տվողն ասում է.

«Քրիստոս ծնվեց և հայտնվեց»

7. Ողջույնն ընդունողը պատասխանում է.

«Օրհնյալ է հայտնությունը Քրիստոսի»:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔՆԵՐ

1. Հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու. ամեն:

2. Փառք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. ամեն:

3. ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Հա՛յր մեր, որ երկնքում ես,
սո՛ւրբ թող լինի քո անունը.
քո թագավորությո՛ւնը թող գա.
քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես
որ երկնքում է՛.
մեր հանապազօրյա հացը տո՛ւր մեզ
այսօր.
և ների՛ր մեզ մեր հանցանքները,
ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ
հանցանք են գործում մեր դեմ.
և մի՛ տար մեզ փորձության, այլ փրկի՛ր
մեզ չարից.
որովհետև քո՛նն է թագավորությունը և
զորությունը
և փառքը հավիտյանս. ամեն:

4. ՀԱՎԱՏՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հավատում եմ Հորը՝ որպես
ճշմարիտ Աստված,
Հավատում եմ Որդուն՝ որպես
ճշմարիտ Աստված,
Հավատում եմ Սուրբ Հոգուն՝ որպես
ճշմարիտ Աստված:

/Սուրբ Պատարագ/

5. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

Տե՛ր, եթե շրթներս բացես, բերանն իմ
կերգի քո օրհնությունը:

/Սաղմոս 50.17/

6. Լույսի առավոտ

Արդար արեգակ
Թող քո լույսը ծագի ինձ վրա:
Հորից բխող Սուրբ Հոգի
Հոգուցս բխեցրու
Քեզ խոսքեր հաճելի:

/Սուրբ Ներսես Շնորհալի/

7. ԱՂՈԹՔ ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ուղղի՛ր մեր ձեռքի գործերը, Տե՛ր, մեր ձեռքի գործերը հաջողությա՛մբ պսակիր. ամեն:

/Սաղմոս 89.17/

8. ԱՂՈԹՔ ԼԱՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իմաստություն Հոր՝ Հիսուս, տո՛ւր ինձ իմաստություն բարին խորհել, խոսել և գործել ամեն ժամ Քո առաջ, փրկի՛ր ինձ չար խորհուրդներից, խոսքերից և գործերից. և ողորմի՛ր քո արարածներին, և ինձ՝ բազմամեղիս. ամեն:

9. ԱՂՈԹՔ ԵՃԱՇ ՈՒՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ճաշակենք խաղաղությամբ այս կերակուրները, որ մեզ պարգևել է Տերը, օրհնյա՛լ է Տերն իր պարգևների համար. ամեն:

10. ԱՂՈԹՔ ՃԱՇ ՈՒՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Փառք տիեզերքի կերակրողին, որ մեզ կերակրեց և կշտացրեց, Նրան փառք հավիտյանս. ամեն:

11. ԱՂՈԹՔ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՎ ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Բոլորի պահապան Քրիստոս, թող քո Աջը հովանի լինի ինձ գիշեր ու ցերեկ, տանը մնալիս, ճամփա գնալիս, քնած թե արթուն, որպեսզի երբեք չտկարանամ. և ողորմի՛ր քո արարածներին, և ինձ՝ բազմամեղիս. ամեն:

/Սուրբ Ներսես Շնորհալի/

12. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Ամեն հայի սրտից բխած,
Լսի՛ր այս ձայնը, ո՞վ Աստված.
Երկար կյանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հորը.
Տե՛ր, անսասան պահիր Դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռը: